


1908



1909



ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՈՎԱՋԱՄԻ


ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1908 թ.

ԳՈՐԾՈՒՆԵՐԻ ԹԵԱՆ

(6 պատկերով)



ԹԻՖԼԻՍ  
ԷԼԵՎԱՆԴԱՎԱՐ ՏՊԱՐԱՆ ՕՐ. Ն. ԱՌԱԽԵԼԻ ՊՈԼԻՏ. 2.  
1909

1 MAR 2010

361

4-76

ս/6

370  
2417-86

# ՏԵՂԵԿԱԳԻՐ

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ

ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ

1908թ.

ԳՈՐԾՆԵՐԻ ԹԵԱՆ

0495



ԹԻՖԼԻՍ

ԷԼԵՔՏՐԱԿԱՐ ՏՊԱՐԱ ՁՐ. Ն. ԱՐԱՆԵԱՆԻ ՊՈԼԻՑ. 7.

1909

23 MAY 2013

42831

Օ Գ Ռ Ո Ւ Պ Ժ Ա Զ

Կ. Հ. Բ. Ը. ԽՈՐՀԻ ԿԱԶՄԸ ԵՒ ՆՐԱ 1908 թ. ԳՈՐԾՆԵՐԻ-

ԹԵԱՆ ՄԱՍԻՆ

1908 թ. փետրվարի 2-ին հանդիսաւոր կերպով կայացաւ առաջին ընդհանուր ժողովը վերակազմւած Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան, որի կանոնադրութիւնը հաստատուել է նոյն տարւայ յունւարի 31-ին:

Այդ ընդհանուր ժողովում, գաղտնի քուէարկութեամբ, խորհրդի անդամներ ընտրուեցին. Սամսոն Յարութիւնեան, Յովհաննէս Սպենդիարեան, Սմբատ Խաչատրեան, Սամուէլ Բալաղեան, Առաքել Սարուխանեան, Խաչատրու Աֆրիկեան, Յակոբ Քոչարեան, Յովսէփ Ամիրխանեան, տիկ. Հեղինէ Առուստամեան, Սահակ Լիսիցեան, Աղէքսանդր Պապովեան և Յակով Շահնազարեան: Փոխանդամներ ընտրւեցին՝ Ստեփան Մալխասեան, Արշալոյս Միհթարեան, Սարգիս Մելքոնմեան և Գէորգ Խատիսեան: Իսկ Սեպտեմբերի 24-ին 1908 թ. կայացած ընդհանուր ժողովում գաղտնի քուէարկութեամբ ընտրւեցին վերաստուգող յանձնաժողովի անդամներ. Սիմէօն Շահվերդեան, Աւետիք Եղեկեան և Սարգիս Խարազեան. փոխանդամներ (վեր. յանձ.)—Արամ Նազարէթեան, Կարապետ Բաբայեան:

Խորհուրդը իր առաջին հերթական նիստում, կանոնադրութեան § 31 համաձայն, ընտրեց խորհրդի պաշտօնատար անձանց. Նախագահ խորհրդի՝ Սամսոն Յարութիւնեանին, փոխ նախագահներ՝ Յովհաննէս Սպենդիարեանին և Սմբատ Խաչատրեանին, գանձապահ՝ Առաքել Սարուխանեանին, քարտուղար՝ Աղէքսանդր Պապովեանին:

Խորհրդի անդամ Սմբատ Խաչատրեանը Թիֆլիսից հեռանալու պատճառով հրաժարւեց 1908 թ. հոկտեմբերի 20-ից. նրան փոխարինեց փոխանդամ Սարգիս Մելքոնմեանը, որ համարեա տարուայմեծ մասը, իբր փոխանդամ, աշխատել է խորհրդի կազմի մէջ:

Հաշուետարւայ ընթացքում խորհուրդը ունեցել է 34 նիստ:

Խորհրդի անդամների նիստերի յաճախումները արտայայտւել են հետևեալ կերպով:

Ա. Ա. Յարութիւնեան	.	.	.	.	31	անգամ
Ա. Ա. Խաչատրեան	.	.	.	.	17	«
Յ. Ա. Սպենդիարեան	.	.	.	.	17	«
Ա. Դ. Լիսիցեան	.	.	.	.	27	«
Խ. Տ. Աֆրիկեան	.	.	.	.	16	«
Յ. Բ. Քոչարեան	.	.	.	.	23	«
Յ. Ա. Ամիրխանեան	.	.	.	.	12	«
Ա. Զ. Սարուխանեան	.	.	.	.	19	«
Յ. Հ. Շահնազարեան	.	.	.	.	32	«
Ա. Ա. Բալաղեան	.	.	.	.	18	«
Ա. Ա. Պալովեան	.	.	.	.	32	«
Միկ. Հ. Բոռւստամեան	.	.	.	.	22	«
Ա. Դ. Մելքոնմեան	.	.	.	.	13	«

Կովկասի Հայոց Բարեգ. Ընկ. առաջին ընդհանուր ժողովը, որ կայացաւ 1908 թ. փետր. 2-ին, ընտրելով իր գործադիր մարմինը՝ խորհուրդը, առանց որ և է կօնկրէտ խնդիրներ տալու, յանձնարարեց նրան միայն ընկերութեանս կանոնադրութեան իրագործումը, մի կանոնադրութեան, որ նախատեսելով հայ ժողովրդի բոլոր կուլտուրական-բարեգործական պահանջները, Ընկերութիւնը դարձնում էր մեր կեանքում եղակի հիմնարկութիւն, իսկ խորհրդի դիրքը՝ չափազանց պատասխանատու:

Հայ-թուրքական ընդհարումների աւերումները հայ գաւառներում, ընդհանուր տնտեսական տագնապից առաջ եկած գործադրկութիւնն ու ընդհանուր աղքատութիւնը, հայ մասսաների համատարած ուսումնագրկութեան մղձաւանջը — խորհրդիս կազմակերպման հէնց առաջին օրից հրապարակ նետեցին մի խնդիր, այն է շուտափոյթ մշակել ժողովրդի տնտեսական մտաւրական պահանջներին՝ կանոնադրութեան թոյլ ալւած սահմաններում բաւարարութիւն տալու սիստեմատիկ և ներդաշնակ գործունէութեան մի ծրագիր։ Միւս կողմից անհրաժեշտ էր անմիջապէս դիմել նաև ընկերութեանս ձիւղերի կազմակերպման ծանր գործին, համախմբել ընկերութեանս շուրջը գաւառների բոլոր կենսունակ ոյժերը և զարգացնել տեղական գործունէութիւնը։ Այս բոլորին աւելանում էր նաև այն ծանրակշիռ հանգամանքը, որ կեանքի հրամայողական պահանջների ազդեցութեան տակ, խորհուրդս ստիպւած էր այդ կազմակերպչական և օր-

պանական աշխատանքի հետ զուգընթացաբար վարել և ընթացիկ գործերը՝ որբանոց—դպրոցի, ճաշարանի, աղքատների նպաստների և այլն, մանաւանդ որ խորհուրդս, լինելով ամբողջ ընկերութեան կենտրոնական գործադիր մարմինը, նա միևնույն ժամանակ, փաստորէն, և ընկերութեանս թիֆլիսի ճիւղի վարչութիւնն է ներկայացնում։

Այս բոլոր հանգամանքները ինքնին պիտի նախ որոշէին խորհրդի գործունէութեան թէ ծրագիրը և թէ ուղղութիւնը։

Ծրագրի բազմակողմանի և պատասխանատու նպատակների գործառնութիւնը պահանջում էր խորհրդից, նախ և առաջ աշխատանքի բաժանում և երկրորդ՝ հայ մտաւրականութեան կենդանի գործութիւնը։ Այս տեսակէտից խորհուրդը արդէն փետրւարի 20-ին կայացրած իր որոշումով, բաժանուեց հետևեալ մասնաժողովների՝ որբանոցի, ճաշարանի, նպաստների, ֆինանսական, կալւածական և այլն, որոնցից ամէն մէկը, բացի հերթական նիստեր ունենալուց, պէտք է զբաղւէին իրենց յանձնւած հիմնարկութիւնների կանոնադրման և զարգացման հարցերով։

Ցանկանալով ընկերութեանս առաջադրած նպատակները դարձնել հայ հասարակութեան սեպհականութիւն և հոգացողութեան առարկայ, խորհուրդս իր կազմակերպման հէնց առաջին օրերից գիմեց մամուլի միջոցով հայ ինտելեգենցիային, հրաւիրելով նրաշարունական գործակցութիւնը։

Ապահովելով հայ հասարակութեան նիւթական և մտաւրական աշակեցութիւնը, խորհուրդը, ինչպէս ասացինք, բացի ընթացիկ գործերից, ձեռնարկեց օրգանական աշխատանքի, ելակէտ ունենալով հայ ժողովրդի խոշորագոյն պահանջները, որոնց թւում նախ և առաջ գպրոցական տնտեսական խնդիրները։

Այսպէս, փետրվարի 23-ի նիստում խորհուրդը մանրամասն քննելով դպրոցական հարցը, կազմեց մի առանձին դպրոցական ժողով, ուր բացի խորհրդի անդամներից հրաւիրուեցին նաև մեր մանկավարժական աշխարհի կարևոր ոյժերը, որոնք ամիսներ շարունակ բազմաթիւ նիստերում մշակեցին ընկերութեանս միջոցներով նպաստելիք և պահելիք դպրոցների տիպը, վարչական կազմը, ընկերութեանս հետ ունենալիք յարաբերութիւնները, ինչպէս նաև կարևորագոյն խնդիրը՝ այն է դպրոցական ֆօնդը։

Տարուայ ընթացքում եղած ընդհանուր ժողովներին տրուած

զեկուցումներից արդէն յայտնի են այն միջոցները, որոնց խորհուրդս դիմել է դպրոցական գործի համար նիւթական միջոցներ ժողովելու նպատակով։ Բացի մամուլի միջոցով եղած ընդհանուր կոչերից, խորհուրդս բազմաթիւ դիմումների միջոցով և իր կազմի առանձին անդամների աշխատական ջանքերով, զբաղեցրել է հաշետութեան տարուայ ընթացքում հայ հասարակական միտքը դպրոցական հարցով, դարձրել է նա նոյն իսկ ամբողջ Մոսկվայի հայ գաղութի առանձին խորհրդակցութեան առարկայ, իր ճիւղերի միջոցով ժողովել է մեր գաւառների դպրոցական վիճակի մասին խոշոր գրական արժէք ունեցող եզակի տեղեկութիւններ և անցեալ ուսումնարանական տարուայ սկզբից բացել է մի շարք դպրոցներ, որոնցից շատերը եթէ նոյն իսկ չեն արդարացնելու ամբողջապէս ընկերութեանս բոլոր յոյսերը, հէնց իրենց գոյութեամբ իբրև գրադիտութիւն տարածող հիմնարկութիւններ, սկզբնաւորելու են հայ մասսաների աւելի ըացիօնալ հիմունքների վրայ դրուած լուսաւորութեան խոշոր գործը։ Խորհրդիս դիմումները, շատ քիչ բացառութեամբ, գտել են իրենց արձագանքը թէ ընդհանրութեան և թէ առանձին անհամաների կողմից, որոնց թւում պէտք է յիշել հանգուցեալ Ա. Ս. Անանեանին և պ. պ. Ա. Ի. Մանթաշեանին և Տ. Ա. Փրիկեանին, ինչպէս նաև Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդին, որոնց աջակցութեամբ խորհրդիս յաջողուեց դպրոցական գործը սկսել փոքր ի շատէ խոշոր ծաւալով։

Դպրոցական գործունէութեան հէնց առաջին ամսւայ պրակտիկան պարզեց կենտրոնական հսկողութեան անհրաժեշտութիւնը որի պատճառով խորհուրդս ստիպւած եղաւ հրաժարւել իր նախկին օրոշումից, այն է բաւականանալ ճիւղերի միջոցով եղած հսկողութիւնից և հոկտեմբերի 1-ից հրաժարեց շրջիկ տեսչի պաշտօնով — Երևանի թեմական դպրոցն աւարտած և Արտասահմանում Ցիւրիխի և Սարագուրդի համալսարանում մանկավարժութիւն ուսած պ. Վահան Տէր-Աբրահամեանին։

Բացի ընդհանուր կրթութիւն տարածող դպրոցներից, խորհուրդս զբաղւել է նաև մեր երկրի տնտեսական պայմանների համապատասխան մասնագիտական դպրոցներ բանալու խնդրով, որի համար նոյնպէս կազմակերպել է մեր գիւղատնտեսներից մի յանձնաժողով, որ արդէն մշակել է գիւղատնտեսական դպրոցների տիպը։

Բացի դպրոցական գործից, խորհրդիս առանձին հոգաւարու-

թեան առարկայ է եղել Թիֆլիսում մի կենտրոնական գրադարան-ընթերցարան ունենալու խնդիրը, որի համար նոյնպէս կազմակերպւել է մեր գրական ոյժերից մի յանձնաժողով, որ մի շարք խորհրդակցութիւններից յետոյ վերջապէս կազմակերպել է գրադարան-ընթերցարանը. հրաւիրւել է գրադարանապետի պաշտօնով մեր գրական աշխատաւորներից պ. Աւետիք Արասխանեանը. Գրադարանի վերաբերմամբ նոյնպէս խորհուրդս պարտաւոր է յայտնել, որ նրա դիմումները արձագանք գտան ոչ միայն Թիֆլիսի հայ մտաւորականութեան և գրական ներկայացուցիչների կողմից, որոնք չինայեցին իրանց աշխատանքը և ժամանակը, այլ և առանձին անհամաների կողմից, որոնցից օրինակ պ. պ. Արտաշէս Էնֆիաջեանն և Ս. Յ. Գիւլիշամբարեանը ինչպէս և տիկ. Դարեա Յովհաննիսեանը, որոնք նւիրաբերեցին գրադարանին իրանց մօտ եղած գրքերի ժողովածուները և առանձին գրադարանները։

Հայ ժողովրդի լայն խաւերի տնտեսական տագնապի սուր արտայայտութիւնների դէմ մրցելու նպատակով, խորհուրդս կանգ է առել զլխաւորապէս մանր վարկային հիմնարկութիւններ տարածելու գաղափարի վրայ, որի համար նա դիմել է իր տեղական ճիւղերին տուանձին շրջաբերականով և մանրամասն ցուցմունքներով. մինչև այժմ յաջողւել է խնդիրը գործնական հողի վրայ զնել միայն Լագոդաղի շրջանում, որտեղ հաւանականաբար, ամենամօտ ապադայում կրացւի փոխատու վարկային հիմնարկութիւն՝ պետական գանձարանի աջակցութեամբ։

Առանձնակի յիշելու է և պ. Ա. Ղարաջեանի անունով և միջոցներով կառուցած ընկերութեան նոր շէնքը, ուր տեղաւորւում է ոչ միայն ընկերութեանս գրադարանը, ճաշարանը, այլ և ծառայում է Թիֆլիսի հայ հասարակութեան որոշ կուլտուրական պահանջներին։

Այսպէս, այդ շինութեան մէջ խորհուրդս ձրիաբար յատկացը-րել է առանձին սենեակ՝ կով. հայ ուսուցչական Միութեան, ընկ. Դահլիճը տրում է դասախոսութիւնների, երեկոյթների և ցերեկոյթների համար և այլն։

Մասնաւորապէս Թիֆլիսի չքաւոր ուսանող երիտասարդութեանը թարմ և մատչելի ճաշ մատակարարելու համար խորհրդս, բացի սովորական ձրի ճաշերից, որոշեց տալ նաև էժանագին ճաշ բոլոր ցանկացող և չքաւոր աշխատաներին։

Գալով զուտ բարեգործական գործնէութեան, խորհուրդս բացի ընթացիկ գործնէութիւնից, ի նկատի առնելով այդ հարցի բարձրութիւնը և կանոնաւորելու անհրաժեշտութիւնը, զբաղւել է նպաստները բախչելու գործը աւելի բացիօնեալ հիմունքների վրայ դնելու, որի համար և իր տրամադրութեան տակ ունի մի քանի առաջարկութիւններ:

Բացի այս ընդհանուր և սիստեմատիկ գործնէութիւնից, խորհուրդս զբաղւել է ընթացիկ հարցերով և աշխատել է արձագանք տալ տեղական կեանքի աչքի ընկնող երևոյթներին, ինչպէս օր. Ալէքսանդրապոլի հեղեղից վնասւածներին անմիջապէս օգնութեան է հասել իր ներկայացուցիչների միջոցով և դրամական օգնութեամբ:

Հաշւետութեան տարւայ ընթացքում ընկերութիւնս բացի մանր նւիրաբերութիւններից, ստացել է նաև Սլավալակ գիւղի աւ. քահանայ Յովհաննէս Տէր-Գալստեանից նւէր երկու տուն և 1 այգի, հանդուցեալ Ա. Ա. Անանեանից—20000 լ. և Ա. Ք. Ղարաշեանից ընկ. շնչը կառուցանելու համար՝ 20,000 լ.։

Խորհուրդս ունեցել է մասնաժողովներ հետեւեալ կազմերով։

### 1) Շաշարանի մասնաժողով

- Տիկ. Հ. Առուստամեան.
- Յ. Շահնազարեան.
- Ա. Խաչատրեան.

### 2) Ողբանոցի մասնաժողով

- Իշխանուհի տիկ. Մարիամ Թումանեան
- Տիկ. Իւլիա Սպենդիարեան
- Տիկ. Հ. Առուստամեան
- Ա. Սարուխանեան.

### 3) Փինասսական մասնաժողով

- Ա. Սարուխանեան.
- Խ. Աֆրիկեան.
- Ա. Բալաղեան.

### 4) Կալսածական մասնաժողով

- Ա. Լիսիցեան.
- Ա. Մելքոնմեան.
- Յ. Ամիրխանեան.

### 5) Նպաստաժառոյց մասնաժողով

- Յով. Սպենդիարեան.
- Յակով. Շահնազարեան.
- Սարգիս Մելքոնմեան.
- Աղէքսանդր Շահիկեան.
- Գէորգ Խատիսեան.

### 6) Դրադաքան-ընթերցարանի մասնաժողով

- Ա. Բալաղեան.
- Յ. Քոչարեան.
- Ա. Պալովեան.
- Յ. Շահնազարեան.
- Ա. Բաբախան (Լէօ).
- Ա. Լիսիցեան.
- Լ. Բաբայեան.
- Յ. Տէր Միրաքեան.
- Ա. Աւետեան.
- Ա. Աբեղեան.

### 7) Գիլատնտեսական մասնաժողով

- Ա. Սահակեան.

Ա. Աթանասեան.

Յ. Շահնազեան.

Յ. Մելիք-Բախտամեան.

Ա. Աբովեան.

Տ. Գիւղալեան.

Մ. Մուչայեան.

Յ. Փիրալեան.

Սամսոն Յարութիւնեան.

Մ. Մելքոնմեան.

Յ. Սպենդիարեան.

8) Տաճկահայ զաղթականներին հայրենիք ուղարկելու առթիւ ընտրած մասնաժողով

Գ. Գափեան.

Վ. Փափաղեան

Սարիբեկ Յարութիւնեան,

Հ. Օհանեան.

Գ. Վարդանեան.

Տէր Արիստակէսեան.

Մ. Թաղիկեան.

Լ. Քէհեայեան.

Հ. Սօլովեան.

Յ. Քոչարեան.

Ա. Գիւլբէնգեան.

Սամսոն Յարութիւնեան.

տիկ. Հ. Առուստամեան.

» Իւ. Սպենդիարեան.

» Մ. Ցուրինեան.

» Մ. Խատիսեան.

» Գ. Յովհաննիսեան.

» Զ. Գիւլբէնգեան

Կ. Հ. Բ. Բ. «ԽՈՒԴԱԴԵԱՆ» ՈՐԲԱՆՈՑԸ

Որբանոցը բացւել է 1903 թւի սեպտեմբեր ամսին և պահելում Խուդագեանի ծախսով։ Որբանոցը, կառավարելու համար ընտրուած է մի յատուկ մասնաժողով.—իշխանուհի Մ. Թումանեան, իշխ. Ս. Արդութեան-Երկայնաբազուկ, տ. Իւ. Սպենդիարեան, վարչութեան կազմից տ. Հ. Առուստամեան և պ. Ա. Սարուխանեան։

Որբանոցը զետեղւում է Խուդագեանի շինութեան վերևի յարկում, ունենալով 8 սենեակ, որոնցից 4-ը ննջարան են, 1-ը կառավարչուհու սենեակն է, 2-ը պարապմունքների համար, 1-ը հիւանդանոց և մի մեծ պատշտամբ, որ յարմարեցրած է ցերեկւայ պարապմունքների համար։ Վերևի յարկում ճաշարան սենեակ չը կայ, երեխաները ճաշի ժամանակ իջնում են ներքեւ ընկերութեան ձրի և էժանագին ճաշարանը։ Բոլոր սենեակները այս տարւանից լուսաւուած են ելէքտրական լոյսով։

Որբանոցում տարւայ սկզբում խնամւում էին 33 որբեր և կիսաորբեր։ Անցեալ ամառ Դիլիջանից ընդունւել է մէկը վճարով խսկ փետրւար ամսին որբերից մէկը վախճանւեց ժառանգական թոքախտից, ուրեմն այժմ ևս բոլոր սանուհիների թիւը 33 է։

Ամենափոքրի հասակը 5 տարեկան է. իսկ ամենամեծինը 15 տարեկան և սովորում են 4 ուսումնարաններում, այն է Յովնանեան դպրոցում 8 հոգի, Զիգրաշէնի դպրոցում 9 հոգի. Թանդոյեան դպրոցում 10 հոգի, Գայեանեան դպրոցում 1 հոգի. մեծերից մէկը ուսման մէջ անընդունակ լինելու պատճառով յաճախում է տիկին Վերմիշեանի ձեռարուեստի դպրոցը (րսչոյ տրսդ), իսկ ամենափոքրերը մնում են որբանոցում կառավարչուհու հսկողութեան տակ։

Անցեալ տարի սանուհիներից մի քանիսը սովորում էին որբանոց—դպրոցում, որը այժմ փակւած է։ Ուսման մէջ երեխաները բաւարար յառաջադիմութիւն են ցոյց տալիս։

Որբանոցը ղեկավարւում է մի կառավարչուհով (օրիորդ Քինդարեան), որը ունէր օգնականուհի։

Երեխաների առօրեայ կեանքը ընթանում է որոշւած յայտնի կարգ ու կանոնով։ Ծնատանեկան բոլոր աշխատութիւնները կատարում են իրանք երեխաները, ունենալով միշտ հերթապահներ։ Առաւտեան նոքա վաղ վեր են կենում, մաքրում են իրանց սենեակները, կօշիկները և շորերը և հաւաքում անկողինները, թէյ են խմում և գնում ուսումնարան։ Վերադառնալով որբանոց, նրանք հանգստանում են մինչև ճաշ, որ արւում է նրանց ժամը 2-ին։ Այնուհետեւ երեխաները մի քիչ խաղալուց և հանգստանալուց յետոյ սկսում են սովորել յետեւեալ օրուայ դասերը և ապա զբաղւել անային գործերով, այն է՝ օգնել խոհարարուհուն ամաններ լուանալու, սրբում են սեղանատունը, պատշպամբը, իրանց համար գօղնոցներ, թաշկիսակներ, երեսսրբիչներ կարում և այլն։ Երեկոյեան ժամը 6—7 սանուհիները թէյ են խմում և ապա պարապում, փոքրները 8-ին, իսկ մեծերը 9 ին պառկում են քնելու։ Ամեն մէկ երեխայի տրւում է աշխատանք իր հասակի համապատասխան։

Ազատ ժամերը կառավարչուհին զբաղւում է սանուհիների հետ զրուցատրութեամբ և ընթերցանութեամբ։ Սանուհիների միակերպ կեանքը մի փոքր զանազանակերպելու համար, տարուայ ընթացքում մի քանի անգամ սանուհիներին տարել են ներկայացումների և սարքել տօնածառ։

Որբանոցի սանունդը և սանուհիների առողջութիւնը աւելի բաւարար է քաննախկին տարիները, շնորհիւ այն հանգամանքի, որ ուրոշ չափով աւելացրւուած է մսի քանակութիւնը և շաբաթական 2—3 անգամ երեխաները ստանում են մի-մի բաժակ կաթ (հիւանդներին տրւում է առանձին սնունդ բժշկի կարգադրութեամբ) և ամառը անց են կացնում ամարանոցում, ինչպէս անցեալ տարի Դիլիջանում։

Որբանոցը ունի մշտական բժիշկ՝ պ. Ա. Շինեան, որ այցելում էր հիւանդ երեխաներին և ձրիաբար բժշկում։ Բացի նրանից, կարիք եղած ժամանակ, խորհրդակցութեան և բժշկելու համար հրաւիրւել են բժ. բժ. Նաւասարդեան, Զարգարեան, Ումիկեան, կարապետեան և ատամնաբոյժ կաճկաճեան։

Այս տարուանից մասնաժողովը նախաձեռնել է մտցնելու սեղագործութիւն, թաղիքներից գործուածքներ և գուլպայագոր-

ծութիւն. բացի այդ, հրաւիրուած է ձեռագործութեան մի վարժուհի, որը մեծերին սովորեցնում է կարևոր և ձեւ:

Երեխաներից մի քանիսը ցոյց են տալիս առանձին ընդունակութիւններ, ինչպէս, օրինակ, աղջիկներից մէկը (*Մելիքեան*) մեծ ընդունակութիւն է ցոյց տալիս գէպի երգեցողութիւն և երաժշտութիւն. նրա մէջ այդ ընդունակութիւնը զարգացնելու և կատարելագործելու համար հոգէ տանում տիկին իւլիս Սպենդիարեանը, որի անձնական ծախքով օրիորդը սովորում է երաժիշտ օր. Գաբակի մօտ:

Կ. Հ. Բ. Ը. ՃԱՇԱՐԱՆԸ 1908 թ.

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան ճաշարանը հիմնուած է միմիայն դպրոցական չքաւոր աշակերտ-աշակերտուների համար:

Ճաշարանի կառավարիչ եղել է 1908 թուին խորհրդի անդամ պ. Ս. Խաչատրեանը, իսկ վերջերս, նրա բացակայութեան պատճառով, խորհրդի անդամներ՝ տ. Հ. Առուտամեան և պ. Յ. Շահնազարեան: Բացի այս, գրսից հրաւիրուած են եղել և տ. տ. Պ. Յարութիւնեան, Վ. Աղամալեան, Ե. Մուչայեան, օր. օր. Ե. Տէրդիկորեան, Վ. Խանդալամեան, որոնք և հսկել են ճաշարանի կարգ ու կանոնի, ճաշի սննդարար և մթերքների թարմ լինելու վերայ:

Ճաշողների ընդունելութիւնը կատարուում է խորհրդի գիտութեամբ, որոնց չքաւորութիւնը ստուգում է կամ ինքը խորհուրդը և կամ ղեկավարուում է դպրոցական վարչութեանց վկայութեամբ:

Ճաշողները ճաշել են կամ ձրի և կամ արժան վճարով, ամսական 2 ը. 40 կ., այդ վերջինների համար վճարել են կամ մասնաւոր անձինք և կամ դպրոցական հաստատութիւնները: Իրանց անձնական հաշուով ճաշողների թիւը շատ սահմանափակ է եղել:

Ճաշարանի մուտքի աղբիւր կազմել են, բացի ընկերութեանը ընդհանուր հկամուտից յատկացրած գումարը, այլ և զանազան անձանցից և հիմարկութիւններից ստացուած ճաշավարձը և յատկապէս ճաշարանի համար նուիրուած գումարները: Ուրախութեամբ պէտք է յիշենք, որ վերջերս նուիրուում են գումարներ, այդ նպատակով Արանք գնալով օր աւուր աւելանում են, որ ապացոյց է հարասութեան համակրութեան, գէպի այս օգտաւէտ գործը:

Ընկերութեանս ճաշարանում, բացի գրսից եկած աշակերտ-աշակերտուներից, ճաշել են և որբանոցի սաները, թուով 34,

որոնց արուել է նոյն ճաշը, ինչ և երթևեկներին։ Ճաշը սկսում է ամենայն օր ժամը 12-ից և վերջանում է 3 ½-ին, տօն և կիրակի օրերը—2-ին։ Ճաշարանի գործունեութիւնը տևում է ամբողջ ուսումնական տարին։ այսինքն սեպտեմբերի 1-ից մինչև մայիսի 31-ը։

Ներկայ 1908 թ. ճաշարանի երկրորդ շրջանը սկսուել է հոկտեմբերի 12-ից՝ շինութեան պատրաստ չկինելու պատճառով։

Ճաշողները նախ քան սեղանատուն մտնելը, պարտաւոր են ստորագրել յատուկ պատրուաստած մատեանում, որը և ցոյց է տալիս, թէ այդ օրը քանի հոգի են ճաշել։

Պատրաստուել է բոլորը ուսիքուայ կերակուր, բացառութիւն են կազմել՝ մեծ պասի առաջին և վերջին շաբաթները, ջրօննեաց պասը և մեծ պասի չորեքշաբթի և ուրբաթ օրերը, երբ պատրաստուել է պասուայ կերակուր։ Անհրաժեշտ դէպքերում, հիւանդներին այդ օրերն էլ ուսիքուայ կերակուր է տրուել։

Ճաշարանում պատրաստուել է մեծ մասամբ ջրալի կերակուր (սուպ), իսկ տօն և կիրակի օրերը, մեծ մասամբ չոր կերակուր, ինչպէս օրինակ ժարկոյ, փլաւ, կատլէտ և այլն։ Տրուել է ամենայն օր մի տեսակ կերակուր, իսկ մեծ տօներին երկու տեսակ։

Կերակուրները մեծ մասամբ պատրաստուել են տաւարի մսից, երբեմն նաև ոչխարի մսով։ Միսը տրուել է այն չափով, որ միշտն թուով, իւրաքանչիւր ճաշողի ընկնի ½ դրվ։։

Ներկայ ուսումնական տարին, ինչպէս վերը յիշեցինք, ճաշարանը բացուել է հոկտեմբերի 12-ին, ուրեմն ճաշարանը գործել է 1908 թ. փետրուարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընդամենը 201 օր։

Այս ժամանակամիջոցում արուած է ճաշ, որբանոցին 7379 ձ. որբանոց-դպրոցի սանուհիներին 2578 ձ. և երթևեկներին 23136 ձ. ընդամենը 33093 ձ.։ կամ միջին թուով մի օրում 165 ձ. դրանից մսով կերակուր պատրաստուած է 147 օր. (այն է, կօտլետ 1 օր, գետնախնձորով սուպ. 43 օր, մակարոնով սուպ 5 օր, բորշ 20 օր., սերկևելով սուպ 2 օր., շիլափլաւ 8 օր, պերլովի կըուպով սուպ 18 օր, ոչխարի մսով փլաւ 2 օր., ճակնդեղով բորշ—3 օր., բլղով սուպ 9 օր., բընձով սուպ 7 օր., ոչխարի մսով ժարկոյ 9 օր, հարիսա 2 օր, մաննիկըուպով սուպ 3 օր, գաղարով սուպ 2 օր, վերմիշելով սուպ 2 օր, տոլմա 4 օր, քուֆթա 1 օր, իսպանախով սուպ 6 օր), ընդամենը 24078 ճաշ, որի վերայ գործ է ածուել

300 փ. 32 գր. տաւարի և ոչխարի միս։ Իւղով կերակուր 36 օր, (այն է քիշմիշով և չըով փլաւ 6 օր, մածուն 7 օր, կաթնէսպաս 12 օր, թանէսպաս 6 օր, և լոբէսպաս 5 օր) ընդամենը 5806 ձ. և պասուայ կերակուր 18 օր (գետնախնձոր 1 օր, լոբէսպաս 9 օր, բընձով սուպ 3 օր, սիսեռով սուպ 2 օր, քիշմիշով փլաւ 2 օր, չըով սուպ 1 օր) ընդամենը 3209 ճաշ, որի ժամանակ գործ է ածուել հիւանդների համար պատրաստած կերակրի վրայ 3 փ. 16 գր. միս։ Ամեն մի ճաշը ընկերութեան վերայ արժեցել է—ուսիքուանը 12—13 կ. իսկ պասուանը 7—9 կ.՝ բոլոր ծախքերը հաշուած։ Հաց գործ է ածուել ամբողջ ժամանակ 560 փ. 34 գրվ. կամ մօտ 1 գրվ. իւրաքանչիւր ճաշ։ (ծառաներին տրուած ճաշը և հացը նոյնպէս մտնում է այս հաշուում)։

Ընկերութեանս խորհրդին դիմել են բազմաթիւ աշակերտաշակերտներ, խնդրելով թոյլ տալ իրենց ճաշելու սեղանատանը, բայց խորհուրդը մերժել է դրանց, միջոցներ չունենալու պատճառով, թէ և խոր կերպով համոզուած է եղել, որ օգնութեան ամենալաւ և արդիւնաւէտ ձևերից մէկն է այդ։

Զնայած գնի արժանացնելուն, 2 ր.—40 կ., շատ քիչ մասնաւոր մարդիկ ձեռք մեկնեցին իրենց լումայով, պահելու ընկերութեանս ճաշարանում յատուկ իրենց անուամբ ճաշողներ։ Ճաշողների թիւը (բացի որբերը) վերջերում հասել է օրական 200-ի։

Դեկտեմբերի 31-ին ընկերութեան սեղանատանը ճաշում էին ընդամենը 168 երթևեկ աշակերտաշակերտուհիներ, հետևեալ դըպրոցներից։ Ներսիսեան դպրոցից 66 աշ. Յովնանեան դպրոցից 14, Զգրաշէնի դ. 11, Խարփուխի դ. 10, Հայունեաց բարեգործական ընկերութեան կար ու ձեի դ. 9, I քաղ. դ. 7, ս. Նշանի դ. 7, Էջմիածնեցւոց դ. 7. II Պուշկինեան դ. 5, Կիրակնօրեայ դ. 5, Ներսիսեան դ. և գիմնազիայ ընդունւելու համար պատրաստուող աշ. 5, Առեւտրական դ. 3, ս. Գէորգի դ. 3, Թանդոյեան դ. 2, «Մեղու» ընկ. դ. 2, I Պուշկինեան դ. 2, քաղաք. իդ. արհեստ. դպր. 1, Նորաշէնի դ.՝ 1 քաղ. դ. 1, Ֆելդշ. դ. 1, Երաժշտ. դ. 1, Գայիհանեան դ. 1, Նկարչական դ. 5 «Լուս» ընկ. դ. 1, Մէլ.-Բախտամեանի կար ու ձեի դ.՝ 1, Ռէալական դպր.՝ 1.

նկատի ունենալով այսպիսի մի հիմնարկութեան հանրամատչեթիութիւնը, ամեն կերպ դիւրացրեց գրադարան ընթերցարանից օգտուելու հնարաւորութիւնը։ Վերոյիշեալ որոշումները հաւանութիւն են գտել խորհրդի կողմից։

Ինչպէս յայտնի է, ընկերութիւնն այժմ ունի նախկին ժամանակներից մնացած մի թէկ փոքրիկ, բայց իր բովանդակութեան կողմից բաւական հարուստ գրադարան։ Թէ այդ զրադարանը և թէպ. պ. Ա. Ենգիանեանի և Ս. Յ. Գիւլիշամբարեանի նուիրած գրքերը, ինչպէս նաև էժանագին գրադարանի այն մասը, որ յանձնուած է ընկերութեանս, կարգի բերելու ու դասաւորելու և մանրամասն զրացուցակ կազմելու համար խորհուրդն հրաւիրեց պ. Ա. Արամանին, որին և յանձնուած է գրադարանապետի պաշտոնին։

Խորհրդի հրաւէրով մայիս ամսին կազմուեց մի մասնաժողով ընկերութեան անդամներից և կողմանակի անձերից։ Մասնաժողովը իր մի քանի նիստերում զբաղուեց այն հարցով թէ ինչ տեսակ գրադարան ցանկալի է ունենալ և հասաւ այն եզրակացութեան, որ ամենից ցանկալին է հիմնել և զարգացնել մի այնպիսի գրադարան, որ պարունակէր իր մէջ 1) բոլոր հայերէն տպագրած գրքերը և պարբերական հրատարակութիւնները, 2) հայագիտութեան, Կովկասի և առհասսարակ Արևելքի պատմութեան, ազգագրութեան, աշխարհագրութեան վերաբերեալ հրատարակութիւնները օտար լեզուներով։ Այսպիսի գրադարանը կը դառնար մի կենտրոնական հիմնարկութիւն, որի պակասութիւնը վաղուց է զգացւում մեր մէջ։

Միենոյն ժամանակ, որպէս զի գրադարանը լինի և մի հանրամատչելի հիմնարկութիւն՝ ժողովրդի բոլոր խաւերին ընթերցանութեան նիւթ մատակարարելու համար, անհրաժեշտ համարուեց, որ գրադարանն ունենայ և ընդհանուր գրական. գիտական բաժին այլ և այլ լեզուներով, ուշադրութիւն դարձնելով մանաւանդ ուսուական գրականութեան վրայ։

Իսկ թէ ինչ միջնցներով կարելի է կազմակերպել այսպիսի մի մեծ հիմնարկութիւն, մասնաժողովը, ինկատի ունենալով, որ ընկերութիւնը հազիւ թէ կարողանայ իր սովորական միջնցներից յատկացնել անհրաժեշտ գումարները, ցանկալի համարեց, որ զիմումներ լինին մասնաւոր անձանց և հասարակութեան, որպէս զի ցանկացողները նուէրնել տան յօդուտ գրադարանի թէ գրքերով և թէ դրամով։

Այնուհետև մասնաժողովը զբաղուեց գրադարանի կազմակերպչական հարցերով։ Նա մշակեց կտնոններ գրադարանի և ընթերցարանի համար, որոշելով այն պայմանները, որոնցով կարելի է օգտուել թէ մէկից և թէ միւսից։ Այստեղ էլ մասնաժողովը, ի

իրաւունքը՝ հայ ժողովրդի կրթական գործը զարգացնելու։ Այս տեսակէտից դպրոցական խնդիրը կազմում էր խորհրդիս և ապա ընկերութեանս ճիւղերի հոգատարութեան կենտրօնական առարկան։

Մեր ժողովրդի լայն խաւերի ուսումնազրկութեան պատկերը, որքան և աղօտ, այնուամենայնիւ վերջին տարիների ընթացքում պարզուելով, ստեղծեց մի չափազանց պատասխանատու դրութիւն ընկերութեանս համար, իբրև հայ ժողովրդի կարեոր հասարակական հիմնարկութեան։

Բայց հայ ժողովրդի ուսումնազրկութեան և ընկերութեանս դպրոցական գործնէութեան մասին ձշգրիտ գաղափար կազմելու համար խորհուրդն գերադասում է խօսել թուերի պերճախօս լեզուով։

1897 թ. ընդհանուր ժողովրդագրութիւնից, անդրկովկասի գիւղական ազգաբնակութեան մասին երեք գլխաւոր նահանգներում — Քութայիսի, Գանձակի և Երևանի—Կարելի է մօտաւոր ձշութեամբ առաջ բերել հետևեալ թւերը \*):

Քութայիսի նահանգում					
1000 տղամարդուն գալիս է	172	գրագէտ,	այսինքն	17,2%	
1000 կանանց	"	92	"	"	9,2%
Գանձակի նահանգում					
1000 տղամարդուն գալիս է	50	"	"		5%
1000 կանանց	"	7	"	"	0,7%

Երեւանի նահանգում					
1000 տղամարդուն գալիս է	66	"	"		6,6%
1000 կանանց	"	6	"	"	0,6%

Այս երեք նահանգների գրագիտութեան միջին  $0/0$ -ը գիւղական ազգաբնակութեան համար կազմում է  $9,6\%$  (տղամարդ) և  $3,3\%$  (կին)։

Այս թւերի գէմ կարելի է առարկել, թէ Գանձակի ու Երևանի գաւառների հայ ազգաբնակութեան գրագիտութեան տոկոսը անպայման շատ տւելի բարձր կարող է լինել, քանի որ թուրք աղգաբնակութիւնը նուազեցնում է այդ տոկոսը։ Բայց, համեմատելով գրէթէ ամբողջովին թուրքաբնակ Դաղստանի, Զաքաթալի շըրջանի և Բագւայ նահանգի գրագիտութեան թւերի հետ, կարելի է

\*) «Անկախ Մամուլ», № 11.

Կ. Հ. Բ. 1908/9 ՈՒՍ. Թ.

## ԴՊՐՈՑԱԿԱՆ ԳՈՐԾՆԵՐԻ ԹԵՍԱԿԱՆ ՄԱՍԻՆ

Կ. Հ. Բ. ընկերութիւնս, արդէն երկրորդ տարին է, որ աշխատում է վերականգնել իր նախկին դիրքը՝ կովկասահայ ժողովրդի կուլտուրական վերածնութեան գործում։ և պէտք է խոստուել, որ հասարակութիւնը, առանց դասակարգերի խարութեան, ամեն տեղ քաջալերել և աջակցել է ընկերութեանս գաղափարը տարածողներին՝ այս դժուարին գործի կազմակերպման սկզբից, մասաւանդ դպրոցական գործնէութեան ասպարէզում։ Անկարելի է այստեղ չը յիշել գիւղական գրեթէ բոլոր համայնքների տարերային ձգողականութիւնը դէպի ուսում-կրթութիւն։ այդ արտայայտում է կովկասահայ գաւառների ամենախուլ անկիւններում անդամ։ Ամեն մի գիւղ անկեղծ կամենում է ունենալ իր դպրոցը, իւրաքանչիւր գիւղացի զոհաբերում է իր սուղ միջոցներից այնքան, որքան կարող է, իր զաւակի կրթութեան դաստիարակութեան գործին՝ իր յուսալի աչքերը դէպի կենդրուները յառած՝ որտեղից—բարեգործական-կուլտուրական ընկերութիւններից—նաև սպասում է բարի աւէտ՝ նախաձեռնութիւն և շօշափելի աջակցութիւն։ Եւ այս կուսական բարերեր նողը (մեր գիւղացիութեան այս միջիթարական ձգտումը դէպի ուսում-կրթութիւն), որ կարօտ է մշակման, կազմում է հայ ժողովրդի ամենամեծ դրամագլուխը, նրա բարոյական դրամագլուխը։

Խորհուրդն, իր կազմակերպման հէնց առաջին օրերից, ձեռնարկեց մի շարք նախապատրաստական միջոցների՝ 1908/9 ուս. թ. իրագործելու կանոնադրութեան թոյլ տուած ամենակարևոր

գալ այն համոզման, որ թուրքերը կարող են նուազացնել այդ տոկոսը ոչ աւելի, քան  $1^0/0$ , Մեր հարևան վրացիները մեզնից շատ առաջ են ընթացել կրթութեան ձանապարհին, իսկ թուրքերից էլ այդ խնդրում գրեթէ չենք տարբերուում:

Վերև բերած թուերը եթէ համեմատելու լինենք Ռուսաստանի և մանաւանդ եւրոպական երկրների գրագիտութեան ընդհանուր թուերի հետ, մեր առաջ կը բացուի այն վիճը, որ բաժանում է մեր երկիրը ժամանակակից քաղաքակրթութիւնից  
Ռուսաստանում\*) (1897 թ.) 1000 մարդուն ընկնում է 277 գրագէտ  
Գերմանիայում (1895 թ.) » » » 980 »  
Բելգիայում » » » 998 »  
Ֆրանսիայում » » » 979 »  
Միացեալ Նահանգներում » » » 893 »

Ահա կովկասի վէրքերից խոշորագոյնը, որն սփոփելու համար չպէտք է խնայել միջոցներ, որովհետև ժողովրդական կրթութիւնից է կախուած մեր ապագան:

Բայց ոչ միայն գրագիտութեան  $1^0/0$ -ով ենք տարբերուում միւս երկրներից. նոյնքան պերճախօս են նաև փաստերը՝ կրթութեան որակի մասին, որ տալիս են մեզ համեմատական տախտակները: Կրթութեան էութիւնը միայն կարդալ գրելու մէջ չէ: Որչափ նըպաստաւոր պայմաններում դրուած լինեն դպրոցները նիւթականինկատմամբ, կրթութեան որակը այնքան բարձրանում է:

Ահա մի ուշագրաւ տղիւսակ կս.

\*) «Экономическая Россия» Проф. Озерова.

1 դպրոցը քանի շնչին է ընկ- նում:	1 շնչին դպր. ընդհան. բիւդիցից որքան է ընկնում:
Նոր-Զելանդիայում	— 5 ր. 54 կ.
Միացեալ Նահանգներում	— 4 — 86 »
Գերմանիայում	960 4 — 43 »
Շւեցարիայում	— 2 — 43 »
Անգլիայում	13008 2 — 36 »
Բելգիայում	990 1 — 69 »
Ֆրանսիայում	— 1 — 66 »
Դանիայում	— 1 — 52 »
Շւեցիայում	424 1 — 33 »
Նորւեգիայում	375 — 97 »
Աւստրիայում	1278 — — »
Եապօնիայում	1710 — 54 »
Ռուսաստանում	2117 — 31 »

Ռուսաստանի կրթական գործի պատկերը արդէն արտայայտում է վերև բերած տախտակի թւերի պերճախօս լեզուվ:

Բայց այդ կողմից շատ աւելի անմիտիթար է հայերիս դրութիւնը, ինչպէս կը տեսնենք քիչ յետոյ:

Կ. հ. բ. ընկ. խորհուրդը օգտուելով իր իրաւունքից հէսց սկզբից որոշեց ամենալուրջ ուշագրութիւն գարճնել ժողովրդական կրթութեան վրայ, այդ գործը համարելով իր գործնէութեան ամենակարևոր կէտերից մէկը որը և գրաւեց նրա աշխատանքների կենտրօնական մասը: Ընկերութեանս գաւառական միւղերը, արձագանք տալով խորհրդիս դիմումներին և ուսումնասիրելով իրենց շրջաններում գտնուած հայ գիւղերի կրթական կարիքները, դիւրացըին խորհրդիս գործը և ընկերութեանս դիւանը լցըին լուրջ ուշագրութեան արժանի այնպիսի գրութիւններով, որոնց մէջ յիշատակուած թուերը և փաստերը՝ դպրոցական—կրթական կարիքների մասին, պարզ ապացոյց են մեր ժողովրդի կուլտուրական յետամսացութեան:

Իրերի այս անմիտիթար վիճակի մասին մօտաւոր գաղափար տալու համար առաջ ենք բերում մեր ձեռքի տակ ունեցած նիւ-

թերից, ստացուած անցեալ յունիսին, մի քանի նմուշներ, որոնք ի հարկէ, դառն իրականութեան մի ամենաթոյլ ուրուազիծն են ներկայացնում:

Կարսի շրջանում գտնուած 91 հայ գիւղում (64,500 բնակիչ, Կարս քաղաքը չը հաշուած) կան միայն հինգ ծխական և 14 պետական դպրոցներ: Մնացած 72 գիւղերը զուրկ են դպրոցներից: Բնդարձակ Շիրակը, բաղկացած 25 հայ գիւղերից, ունի միայն 2 դպրոց: Օլթիի թրքախօս շրջանում, ուր հայ լեզուն մոռացութեան է արուել, 9 հայ գիւղեր ունեն միայն 2 դպրոց: Բասենի 12 հայ գիւղերը—2 դպրոց: Թախտիի շրջանում եղած 16 հայ գիւղերը—կըկին միայն 2 դպրոց, իսկ Կաղզուանի շրջանում՝ և ոչ մի դպրոց: Հին-Նախիջեւննի վիճակում գտնուած 85 գիւղերից 74 հայ գիւղեր չունեն ծխական դպրոցներ:

Նոր-Բայազէտի գաւառը, բաղկացած 58 հայ գիւղերից (102,327 բնակիչ, քաղաքը չը հաշուած), ունի միայն 8 ծխական դըպրոց: Այդ գաւառի Գեղարքունիքի մասում, 33 գիւղերից բաղկացած, կայ միայն 1 (մէկ) ծխական դպրոց, այն էլ Նոր-Բայազէտ քաղաքում, իսկ գիւղերում՝ միայն 3 պետական դպրոց:

Ալեքսանդրապոլի հոգեոր փոխանորդութեան վիճակում, այս ամենահայշատ շրջաններից մէկում, որը ունի 130,000 հ. ազգաբնակութիւն, կայ միայն 22 ծխ. դպրոց, որոնք նոր են բացուել: Իսկ եթէ հաւատանք Մատթէոսեան վարդապետի՝ խորհրդիս ուղղած գրութեանը,—այս շրջանում ազգաբնակութեան 95% ը անդրագէտ է:

Արարանը, իր 25 զուտ հայաբնակ գիւղերով, ուր ապրում են 30,000 բնակիչ, ունի միայն 2 (երկու) դպրոց:

Դանձակի շրջանի 35 հայաբնակ գիւղերից միայն երկուսը ունի ծխական դպրոցներ:

Գորուայ գաւառի 19 վիրախօս հայ գիւղերից միայն երեքում կան դպրոցներ:

Ախոյրալաքի շրջանը, բաղկացած 87 հ. գիւղերից (76,469 հայ ազգաբնակութիւն), ունի միայն 1 (մէկ) ծխական դպրոց: Այսուեղ կան նաև 15 պետական դպրոցներ:

Ներքև բերում ենք մի ամփոփ տախտակ՝ մի քանի հայաբնակ գաւառների կրթական գործի անմիջիթար դրութիւնը պատկերացնող. համեմատեցէք այդ թուերը առաջադէմ երկրների դպրոցական գործի

պատկերը ցոյց տուող թուերի հետ: Մինչդեռ օր. Գերմանիայում դպր. ընդհանուր բիւղջէից ազգաբնակութեան մէկ չնչին ընկնում է 4 ր. 43 կոպ. իսկ Ռուսաստանում միայն 31 կոպ.,—մեր երկրում, հայաբնակ գաւառներից, օրինակ Նոր-Բայազէտի գաւառում, 7<sup>1/2</sup> կոպէկ: Եւ կամ մէկ դպրոցը, օրինակ, Նորվեգիայում ընկնում է 375 չնչին, իսկ Կովկասի Նոր-Բայազէտ գաւառում, մէկ դըպրոցը ընկնում է 9199 չնչին: Կոմենտարները աւելորդ են. թող խօսէ այս տախտակը.

\* Տեղեկադիր Խ. վարդ. Մուրագրէկեանի, կազմած 22 յունիսի 1908 թ.

\*\* Խորագիրը և պատճենը պահպանվում է Հայաստանի պատմական թանգարանում:

\*\*\* Տեղեկադիր Կ. Հ. Բ. Ընկ. Ախալքալաքի ճիւղի. կազմած 14 յունիսի 1908.

\*\*\*\* Φορεψ Ήσανχωατή φημιητική, επορεύ (φυγή) ήσανχωατής καιρούτης ή φρουρή οπνηπλέωντας:

\*\*\*\*\* Տեղեկադիր Մատթէոսեան վարդապետի, կազմած յունիսի 30. 1908.

\*\*\*\*\* Տեղեկադիր Սատրէհուսեան վարդապետը, Կազմած յունիսի 30. 1908.

\*\*\*\*\* Տեղեկադիլ գ. Հ. Ի. Ղազ. Վարսի ճիշդի, կազմած 28 յունիսի 1908.

*Environ Biol Fish* 50: 509–520, 2003.  
© 2003 Kluwer Academic Publishers. Printed in the Netherlands.

Հայոց առաջնորդության մասին պատճեն է առաջ շահագրգությունը կամաց ազգը.

Դեկտեմբեր թ. Ընկած Ալեքսանդր Տիգրանի վարչություն, 14 յուն. 08 թ., 76469 հայ ազգաբնակութիւն և 1 հ. ծի.

—*и въ рѣкѣ. въ вѣтвѣ. въ вѣтви. въ вѣтвѣ. въ вѣтви.* —

Նոյնպիսի ապշեցուցիչ թուեր կարելի է առաջ բերել Ախալշիալի, Երևանի, Վաղարշապատի, Մարգարապատի, Ղարաբաղի և ուրիշ վրացանութիւն ստացած տեղեկագրերից։ Այդ թուերի հետ միասին ամենասրտաճմիկ կերպով նկարագրում են տիրող համատարած սովի, տգիտութեան, վաշխառուական կեղեցումների և առհասարակ հայ գիւղացու ուղղակի անտանելի գրութիւնը և աջակցութիւն են աղերսում, շեշտելով հանդերձ, որ եղած դպրոցներից շատերը մատնուած են փակման վտանգին, եթէ օգնութիւն չստացուի դրսից։

Խորհուրդս, ստանալով այդ տեղեկութիւնները, իրեն անելանելի գրութեան մէջ զգաց։ Զնայած իր տրամադրութեան տակ եղած սուղ միջոցներին՝ զգացւող կարիքին բաւարարութիւն տալու նկատմամբ, այնուամենայնիւ նա չը յուսահատուեց և, յոյսը դրած հայ լաւագոյն տարրերի թէ բարոյական և թէ դրամական աջակցութեան վրայ, գործի դիմեց։

Նախ քան դպրոցական իր գործնէութիւնը սկսելը, խորհուրդս հրաւիրեց Թիֆլիսում ապրող հայ մանկավարժներին, դպրոցական գործին և մեր գաւառական կեանքին գիտակ ինտելիգենտ անձանց և այդ առթիւ լսելով նաև նրանց կարծիքները, իր նիստերից մէկում որոշեց։

1) «Աջակցել հայոց եկեղեցական ծխական դպրոցներին, ընկերութեանս միջոցներով այդպիսիները հիմնելով կարեոր վայրերում և նպաստելով արդէն գոյութիւն ունեցող դպրոցներին, ուրոնք նիւթական միջոցների պակասութեան պատճառով ենթարկւած են փակման վտանգին։

2) Նոր դպրոցներ հիմնելիս կամ եղած դպրոցներին նպաստելիս, նախապատռութիւն տալ այն վայրերին, որտեղ մեծ տարածութեան վրա գոյութիւն չունեն դպրոցներ և կամ ուր մայրենի լեզուին մօռացութեան վտանգ է սպառնում։

3) Որևէ վայրում դպրոց հիմնելիս, աշխատել, որ տեղական հայ հասարակութիւնը իր կարողութեան չափով մասնակցէ դպրոցական ծախքերին։

4) Ընկերութեանս նպաստով պահպանող դպրոցների վերահսկողութիւնը առայժմ յանձնարարել Ընկերութեանս գաւառական ձիւղերին, իսկ հնարաւորութեան դէպքում ունենալ շրջիկ տեսուչ յիշեալ դպրոցների համար։

Խորհուրդս, իր նպատակների իրագործման ցանկալի յաջողութեան համար, գործ է դրել հնարաւոր բոլոր միջոցները—յորդոր կարդալով հայ գիտակից տարրերին թէ մամուլի էջերում և թէ առանձին դիմումներ անելով հայ դրամատէրերին և թէ բազմաթիւ շրջաբերականներ ուղարկելով ընկերութեանս ձիւղերին, աշխատելով գպրոցական խնդիրը, կովկասահայ ժողովրդի գլխովին անգրագիտութեան այս անմիտիթար պատկերը ընդհանուրի սեպհականութիւնը դարձնել, ամենքի ուշադրութիւնը այդ չարիքի վրայ բեռնել։

Սակայն պէտք է ցաւելով խօստովանել, որ իրենց դրամական նուերներով մի քանի անհատներ միայն արձագանք տուին խորհըրդիս կոչերին։ Այսպէս, պ. Ալ. Մանթաշեանի, հանգուցեալ Անանեանի 20 հազարական ըուբլի նուերների միայն տնկումները թոյլ տըրուեցգործադրել կրթական գործի վրայ, Պետերբուրգի հայոց եկեղեցական խորհրդի՝ այդ նպատակին նուիրած 3400 ըուբլին, ինչպէս նաև պ. Տ. Ա. Փրիկեանի 11 դպրոցներին յատկացրած տարեկան 4700 գումարը։ Սրանք են այն խոշոր արդիւնքները, որ խորհուրդս ունեցաւ իր դպրոցական գործնէութեան սկզբում։ Եւ ի նըկատի ունենալով իր տրամադրութեան տակ ունեցած գումարը, խորհուրդս տեղական շահագրգուած համայնքների օգնութեամբ բաց արեց նոր դպրոցներ կամ եղած դպրոցներին տարեկան մի որոշ գումար նպաստ յատկացրեց։ Այդ դպրոցները գտնուում են հետևեալ վայրերում, գիւղերի անուններին կցում ենք նաև, թէ որքան նպաստ է տուած դպրոցներից իւրաքանչիւրին։

Ախալքալակի շրջան։

1. Տիլիֆ գիւղի դպրոցին	.	.	.	300	ր.
2. Գիւմբուրդա	»	.	.	250	»
3. Մամզարա	»	.	.	200	»
Ախալցիսայի շրջան։					
4. Տամալայ գիւղի	»	.	.	250	»
5. Սազըլ	»	.	.	250	»
Դանձակի շրջան։					
6. Ղարաբուլաղ գիւղի դպրոցին	.	.	.	250	ր.
7. Գետաշէն	»	.	.	200	»
8. Բրաջուր	»	.	.	200	»
9. Կորիւնապատ	»	.	.	250	»

<i>Գործիսի շրջան.</i>						
10.	Ալէլու	գիւղի	դպր.	.	.	300 լ.
11.	Հալիձոր	»	»	.	.	200 »
12.	Խոզնաւար	»	»	.	.	200 »
13.	Շիկահող	»	»	.	.	200 »
<i>Կարսի շրջան.</i>						
14.	Բալկատեկլար	»	»	.	.	300 »
15.	Մաւրակ	»	»	.	.	300 »
16.	Զարդանէ (օլթիի շրջ.-թրքախօս)	.	.	.	.	250 »
17.	Փիրւալի	գ.	դպր.	.	.	250 »
<i>Ալքսանդրապոլի շրջան</i>						
18.	Զոռլի	գիւղի	դպրոցին	.	.	200 »
<i>Իզմիրի շրջան.</i>						
19.	Իգդիրմաւայ	գ.	դ.	.	.	200 »
<i>Վաղարշապատի շրջան.</i>						
20.	Ալիքիւչակ	գ.	դ.	.	.	250 »
21.	Ղազանֆար	»	»	.	.	250 »
<i>Հին-Նախիջևանի շրջան.</i>						
22.	Եարմջայ	գիւղի	դպր.	.	.	300 »
23.	Ազա	»	»	.	.	300 »
24.	Ալիաբադ	»	»	.	.	300 »
25.	Շուռութ	»	»	.	.	200 »
26.	Փարադաշտ	»	»	.	.	100 »
<i>Նոր-Բայազէտի շրջան.</i>						
27.	Ալեղոլս	գիւղի	դպրոցին	.	.	300 լ.
28.	Փաշաքենդ	»	»	.	.	300 »
29.	Սօլակ	»	»	.	.	100 »
<i>Ղազանի շրջան.</i>						
30.	Ղազախ քաղաքի	»	»	.	.	100 »
31.	Ղալաչայ	գիւղի	»	.	.	100 »
32.	Բարանայ	»	»	.	.	100 »
33.	Ղողոթան	»	»	.	.	100 »
34.	Թովուղ	»	»	.	.	100 »
35.	Ներքին-Կարմիր-Աղբիւր	.	.	.	.	100 »

<i>Քարավանսարայի շրջան.</i>						
36.	Վերին Աղդան	գիւղի	դպր.	.	.	250 լ.
37.	Քարւանսարայ	»	»	.	.	100 »
38.	Աչաջուր	»	»	.	.	100 »
<i>Արդահանի շրջան</i>						
39.	Արդահանի դպրոցին	.	.	.	.	100 »
<i>Սղնակի շրջան.</i>						
40.	Վելիսցիսէ գիւղի	դպրոցին	»	.	.	100 »
<i>Արթուրինի շրջան</i>						
41.	Տանձոտ գիւղի	»	»	.	.	280 »
<i>Լազողակի շրջան.</i>						
42.	Լագոդախ գիւղաքաղաքի	դպր.	»	.	.	100 »
<i>Փոթիի շրջան.</i>						
43.	Փոթի քաղաքի	դպրոցին	»	.	.	200 »
<i>Օլթիի շրջան.</i>						
44.	Օլթի գիւղաքաղաքի	դպրոցին	»	.	.	250 »
<i>Լոռուայ շրջան.</i>						
45.	Գիւլագարակ գիւղի	դպր.	»	.	.	200 »
<i>Զաքաթալայի շրջան.</i>						
46.	Կախ-Աւան գիւղի	դպր.	»	.	.	100 »
<i>Գօրուայ շրջան.</i>						
47.	Քւախրելի գիւղի	դպր.	»	.	.	300 »
48.	Ախալքալակ	»	»	.	.	300 »
<i>Քուլայիսի շրջան.</i>						
49.	Սաչսէր գ.	դպր.	»	.	.	250 »
50.	Զիար	»	»	.	.	250 »
<i>Թիգլիսի շրջան.</i>						
51.	Մուխրան գ.	դ.	»	.	.	320 »
<i>Մուխրայազէտի շրջան.</i>						
52.	Զիբուխլի գիւղի	դպրոցին	»	.	.	500 »
53.	Ցամաքարերդ	»	»	.	.	300 »
54.	Օրտակլու գիւղի	դպրոցին	»	.	.	500 »
55.	Ներքին-Ախտա	»	»	.	.	500 »
56.	Ռնդամալ	»	»	.	.	300 »
57.	Նորագուղ	»	»	.	.	300 »
58.	Ներքին-Գեօղալտարայ	»	»	.	.	300 »

Հին նախիջեւանի շրջան.		
59. Ռւփա նորաշէն գիւղի դպր. . . .	300	ր.
Ալէքսանդրապոլի շրջան.		
60. Նորաշէն գիւղի դպր. . . .	300	"
Վաղարշապատի շրջան.		
61. Կարբի գիւղի դպր. . . .	900	"
62. Բազմարջուղ " . . . .	500	"
Վերև յիշատակած բոլոր 63 դպրոցները միասին ընկերութիւնից և ընկերութեանս միջոցով նպաստ են ստանում տարեկան 15,050 ր.		
Կարեռը ենք համարում յիշել, որ վերոյիշեալ դպրոցներից վերջին 11 դպրոցին 4700 ր. նպաստը տալիս է պ. Տիգրան Աֆրիկեանը: Քւախրելի գիւղի դպրոցին 300 ր. նպաստը տալիս է պ. Մ. Գ. Ալիբէկեանը, (խօստացել է 5 տարի շարունակ այդքան գումար նուիրաբերել): Վերին Աղդան գիւղի դպրոցին 250 ր. նպաստը տալիս է խորհրդիս նախագահ պ. Սամսոն Ս. Յարութիւնեանը: Բարանայ գիւղի դպրոցին 100 ր. նպաստը տալիս է բժ. Ա. Յակոբեանը: Աչաջուր գիւղի դպրոցին 100 ր. նպաստը տալիս է պ. Ի. Ս. Ալիխանեանը: Փաշաքենդ գիւղի դպրոցին 150 ր. նպաստը տալիս է պ. Գ. Գաֆեանը:		
Ընկերութեանս ճիշերից մի քանիսն ևս իրենց միջոցներից օգնել են հ. ծխական շատ դպրոցների պահպանմանը.		
Ընկ. Դիլիջանի ճիշերի վարչութիւնը նպաստ է տուել Պօղոսքիլիսայ գիւղի դպրոցին . . . .	137	ր.
Զարխէջ	»	"
Դիլիջան	»	"
Կարսի ճիշերի վարչութիւնը Օրթաքաղեկլար գիւղի դպրոցին . . . .	100	"
Արդահանի ճիշերի վարչութիւնը Արդահանի դպր.	100	"
Երևանի ճիշերի վարչութիւնը Երևանի օր. Գայեանեան դպրոցին . . . .	200	"
Նորքի (քաղաքամաս) դպրոցին . . . .	100	"
Կոնտի . . . .	100	"
«Խրիմեան» ծխ. դպրոցին (քաղաքում) . . . .	50	"
Կնշշիկ գիւղի դպրոցին (Դարալագեազում) . . . .	30	"

«Երևանի օգտակար գիտելիքներ տարած. ընկ.» դպր. 100 ր.  
Ծուշու ճիշերի վարչութիւնը հիմնել է տեղում չքաւոր աշակերտական համար դպրոց, որի վրա ծախսել է ներկայ 1908/9թ. 770 ր.  
Բաթումի ճիշերը բացել է արհեստագիտական (պրօֆեսիոնեալ) դպրոց, որի վրա ծախսում է տարեկան 1500 ր.  
Խորհուրդս հնարաւորութիւն չունեցաւ իր նպաստով պահպանող բոլոր դպրոցների համար ինքը ուսուցիչներ ուղարկելու, որովհետև շատ տեղերում հոգաբարձուներն արդէն հրաւիրած էին դասատուներ և պարապմունքները սկսել: Սակայն հարկաւոր և հնարաւոր միջոցները խորհուրդս ըլխնայեց գործ գնել և յիշեալ դպրոցներում ուսուցչական թափուր մնացած պաշտօնների համար ինքը ընտրեց ուսուցիչներ, նախապատռութիւն տալով, ի հարկէ, աւելի կարող, ցենզ ունեցող խնդրատուներին:  
Խորհրդիս օրինակով, ընկերութեանս գաւառական ճիշերն ևս ճշտութեամբ ըմբռնելով կովկասահայ ժողովրդի կեանքում այդ ամենախոշոր չարիքի՝ դպրոցների պակասութեան ամբողջ էութիւնը և, օգտուելով իրենց իրաւունքից ու միջոցներից, ջանացել են նախ այդ մեծ կարիքին մասամբ բաւարարութիւն տալ և իրենց հերթին ոչ միայն շատ դպրոցներ ազատել են փակման վտանգից, այլև աշխատել են, որ կրթական կուլտուրական բնաւորութիւն ունեցող ուրիշ խնդիրներն ևս իրենց գործնէութեան շրջանակում ուշագրաւ աեղ բռնեն, ինչպէս օրինակ՝ գրադարաններ հիմնելը, կիրակնօրնայ դասընթացներ կազմակերպելը, չքաւոր աշակերտներին և ուսանողներին դրամական աջակցութիւն ցոյց տալը, ժողովրդական ձրի դասախոսութիւններ և էժանագին ներկայացումներ կազմակերպելը և այլն...  
Յիշեալ դպրոցների վերահսկողութեան գործը խորհուրդս սկզբում յանձնարարեց միայն ընկերութեանս ճիշերի վարչութիւններին: Սակայն տեխնիքական անյարմարութիւնների պատճառով և հսկողութիւնը աւելի անմիջական դարձնելու նպատակով, նա հոկտ. 1-ից հրաւիրեց և առանձին շրջիկ տեսուչ, պ. Վահան Տէր-Աբրահամեանին, որը աւարտել է թեմական դպրոց և արտասահմանում Յիշերիխի և Սարապբուրգի համալսարանում ուսել մանկավարժութիւն:  
Ընկերութիւնից նպաստ ստացող դպրոցների և այն վայրերի մասին, ուր գտնուում են յիշեալ դպրոցները, ճիշտ գաղափար կազմելու համար, խորհուրդս հոկտ. ամսին հրաւարակեց մի ընդար

ձակ «տեղեկագիր» և ուղարկեց յիշեալ բոլոր դպրոցների վարչութիւններին, որոնք այդ տեղեկագրում արուած 43 հարցերի պատասխաններով բաւական լուսաբանում են թէ տեղացիների տնտեսական դրութիւնը և թէ դպրոցի վիճակը: Այդ տեղեկագրի մէջ յիշուած հարցերը հետևեալներն են:

1 Գիւղը ո՞ր գաւառում, ո՞ր նահանգում և կ. Հ. Բ. Բնկ. ո՞ր ճիւղի շրջանումն է գտնւում:

2 Գիւղը քանի ծուխ ունի. որ ազգից ո՞րքան բնակիչ և ազգաբնակութեան ընդհանուր թիւը:

3 Ի՞նչպէս է տեղացիների և մասնաւորապէս հայերի տնտեսական դրութիւնը: (Յողի քանակութիւնը և այլն):

4 Ազգաբնակութեան և մասնաւորապէս հայերի գլխաւոր պարագմունքն ու ապրուստի աղբիւրը:

5 Արհեստներից և տնային ձեռագործներից ո՞րն է զարգացածն ու արդիւնաւէտը.

6 Երիտասարդութիւնը դիմում է պանդխտութեան և ուր.

7 Մօտաւորապէս ցոյց տալ գիւղում դպրոցական տարիք (8—14) ունեցող հայ տղաների և աղջիկների թիւը:

8 Գիւղը քանի քահանայ ունի և դրանք կրթական ինչ ցեսդ ունին:

9 Գիւղն ունի գրադարան-ընթերցարան և ներկայացումներ երեկոյթներ կազմակերպւում են արդեօք.

10 Ցոյց տալ գիւղում գրադէտների տոկոսը (0/0).—հայ գրադէտները՝ առանձին:

11 Գիւղում կմն հասակաւորներին գրագիտութիւն սովորեցընելու դասընթացներ.

12 Գիւղացիների վերաբերմունքը դէպի դպրոցը:

13 Գիւղում կմն փոխատու խնայողական գանձարաններ և մանր վարկի (միլիօրատիւ կը եղիածի) ընկերութիւններ:

14 Գիւղն շրջակայ գիւղերից կամ քաղաքից ո՞րոնց է մօտ և դրանցից քանի վերստի վրա է գտնւում. տեղեկութիւն տալ ճանապարհների հաղորդակցութեան յարմարութեան մասին և յիշել, թէ երկաթուղու ո՞ր գծի և ո՞ր կայարանից ինչ հեռաւորութեան վրա է գտնւում գիւղը:

15 Ինչ հիւանդութիւններ են յատուկ այդադին և գիւղում

կամ մօտակայ վայրում (ի՞նչ հեռաւորութեան վրա) կայ արդեօք բժիշկ, փեղշեր, հիւանդանոց կամ դեղատուն և ում ծախքով են պահւում:

16 Պարզ և որոշ գրել (ոռուերէն) դպրոցի հոգաբարձութեան փոստային հասցէն:

17 Դպրոցն երբ է բացուել անունը. շէնքը սեպհական է թէ վարձովի, քանի սենեակից է բաղկացած և արդեօք յարմար է պարապմունքի համար:

18 Դպրոցի կահ-կարասիքի և այլ պիտոյքների մասին տալ տեղեկութիւններ:

19 Հոգաբարձական կազմը քանի հոգուց է բաղկացած և դրանք կրթական ի՞նչ ցեսդ ունին:

20 Աշակերտ աշակերտուհիները միասին են սովորում (խառն): թէ զատ-զատ:

21 Դպրոցը քանի տարուայ դասընթաց ունի:

22 Իւրաքանչիւր բաժանմունքում աշակերտ-աշակերտուհիների թիւը ցոյց տալ առանձին առանձին:

23 Բաժանմունքները միացած են թէ առանձին-առանձին (այսինքն մի սենեակում երկու կամ աւելի՞ բաժանմունք է զետեղուած):

24 Եթէ շրջակայ գիւղերից (թուել անունները և քանի վերստի վրայ են գտնւում) դպրոցը յաճախում են աշակերտ-աշակերտուհիներ, ցոյց տալ դրանց թիւը:

25 Աշակերտ-աշակերտուհիների ամենափոքը և ամենամեծ տարիքը:

26 Աշակերտների թիւը. աշակերտուհիների թիւը. սովորողների ընդհանուր թիւը.

27 Ուսուցիչների և վարժուհիների թիւը, անունը, ազգանունը, դրանց կրթական ցէնզը. քանի տարի է որ ուսուցչութիւն են անում և երբ են ոտանձնել ներկայ պաշտօնը:

28 Դպրոցում ինչ առարկաներ են աւանդուում և իւրաքանչիւրից շաբաթական քանի դաս:

29 Աշակերտ-աշակերտուհիները դասական պիտոյքները ձրի՞ են ստանում դպրոցից թէ իրենք են հոգում:

30 Աշակերտ-աշակերտուհիները ո՞ր ձեռնարկներով են անցնում աւանդուուղ առարկաները:

31 Դպրոցն ունի գրադարան. ուսուցչական գրադարան՝ քանի հատոր. մանկական գրադարան՝ քանի հատոր հայերէն և քանի հատոր ուսուերէն:

32 Դպրոցն հնի դեղատուն. ում ծախքով է գնւած և քանի հոգի են օգնութիւն ստացել (ի՞նչ ժամանակից) դրանից:

33 Ներկայ ուսումն. թ. ի՞նչ պաշտօնական անձ է այցելել դպրոցը և երբ. այցելել են արդեօք և ծնողներից. որքան:

34 Ուսուցիչների, վարժուհիների իւրաքանչիւրի տարեկան ոօժիւր. ստանում են արդեօք ձրի բնակարան, վառելիք, ծառայ:

35 Դպրոցին որքան գումար է տալիս կ Հ. Բ. Ընկերութիւնը և որքան՝ գիւղը:

36 Յօգուա դպրոցի ներկայ ուսումն. թ. ի՞նչ նուիրատուութիւններ են եղել. ումնից և ի՞նչ չափով:

37 Դպրոցն ունի գրամագլուխ և որքան. ուրիշ ի՞նչ եկամուտներ ունի:

38 Ուսումը ձրի է թէ վճարով. ձրիավարժների թիւր. եթէ կան թոշակներ, ցոյց տալ գրանց ամենափոքը և ամենամեծ չափը:

39 Դպրոցի ընդհանուր մուտքը. ընդհանուր ելքը:

40 Ի՞նչ անհրաժեշտ կարիք ունի դպրոցը.

41 Ուսումը դպրոցում երբ է սկսում և ուսումն. ա. վերջում սովորաբար որ ամսին դադարում (գիւղերում):

42 Գիւղում բացի ծխական դպրոցից կայ արդեօք ուրիշ ուսումնարան և եթէ այս, ի՞նչ տիպի, քանի տարի է ի՞նչ գոյութիւն ունի, որքան աշակերտներով, և ում ծախքով է պահուում:

43 Մօտակայ գիւղերից որն ունի ուսումնարան (քանի վերստի վրայ է գտնուում), ի՞նչ տիպի է և ում ծախքով է պահուում:

Ընկերութիւնից նպաստ ստացող դպրոցների հետ ունեցած գրադրութեան հսկողութիւնը յանձն է առել խորհրդիս փոխանդամ պ. Սարգիս Մելքումեանը:

Այն դպրոցները, ուր արդէն այցելել է դպրոցներիս տեսուչը և կամ որտեղից ստացուած են ճիշտ տեղեկութիւններ, այդ դպրոցների ցանկը կրկին առաջ ենք բերում, յիշելով նաև թէ դըրանցից իւրաքանչիւրում քանի աշակերտ. աշակերտուհի են սովորում, քանի բաժանմունք ունեն, ուսուցիչների և վարժուհիների թիւը իւրաքանչիւր դպրոցում և գրանց կրթական ցենզը:

Մուխրան. 34 աշակերտաշակերտուհի. 1 և 11 միաց. բաժ., 1

դպրոցուհի, որի ցենզի վկայագրերը չը յաջողուեց տեսնել:

Ախալքալաք. 42 աշ. 1 և 11 միաց. բաժ. 2 ուսուցիչ, երկուսն էլ ներսիսեան դպրոցաւարտ:

Քւախրելի. 60 աշ. 1 բաժ., 1 ուսուցիչ, Ներս. դպրոցաւարտ:

Սաշխէր. 64 աշ. 1, 11, III բաժ. առաջին երկու բաժ. միաց. 1 ուս. Ներս. դպրոցաւարտ և 1 վարժ. գիմնազաւարտ:

Զիսար. 59 աշ. 1 և 11 միաց. բաժ. 2 ուսուց., երկուսն էլ ներսիսեան դպրոցաւարտ:

Կարբի. 67 աշ. 1, II, III բաժ., 2 ուս. և 1 վարժ., ուսուցիչներից մէկը աւարտել է երե. թեմ. դպր., միւսը՝ Աշտարակի պետ. դըրոցը և ունի ուսուցչ. ցենզ, իսկ վարժուհին՝ Երևանի Գայեանեան դպրոցը:

Իգդիրմաւայ. 89 աշ. I. II. III բաժ. 1 ուս., տւարտել է Գէորգեան ձեմարանի Ա. լարանը, 1 վարժուհի՝ Շուշու Մարիամեան դպրոցը և Թիֆլիսի ձեռագործի կուրսերը (ունի ուս. փորձառութիւն) և 1 ուսուց.՝ Ներսիսեան դպրոցաւարտ:

Չոռի. 45 աշ. 1 բաժ. 1 ուսուց. կրթական ոչ մի ցենզ.

Կորիւնապատ. 120 աշ. I. II. III. բաժ. 1 ուսուց. Երե. թեմ. դպրոցաւարտ, 1 վարժ.՝ գիմնազաւարտ, 1 ուս. Ներսիսեան դպր. IV դաս., 1 ուս. Գանձակի քաղ. դպրոցից (չէ տւարտել), 1 վարժ. տեղ. հ. ծխ. դպրոցից (չէ տւարտել), 1 վարժ.՝ տեղ. հ. ծխ. դպր.:

Բրաջուր, 37 աշ. I. II. միաց. բաժ. 1 ուս. Գանձկ. ք. դպրոցաւարտ:

Ղարաբուլաղ. 53 աշ., I. II. III. միաց. բաժ. 1 ուս. Ներս. դպրոցաւարտ:

Գետաշէն. 184 աշ. I. II. III բաժ. վերջին երկու բաժ. միացած. 1 ուսուց.՝ Ներսիսեան դպրոցաւարտ, 1 ուս.՝ Շուշու թեմ. դպրոցաւարտ, և 1 վարժ.՝ Գանձակի օր. գիմնազաւարտ:

Ղազախ. 55 աշ. I. II. III. IV բաժ., առաջին երկու բաժ. միացած, նոյնպէս և վերջին երկուսը. 1 ուսուց.՝ Ներս. դպրոցաւարտ, 1 վարժ.՝ Թիֆլ. գիմնազաւարտ:

Քարւանսարայ. 131 աշ. I. II. III. բաժ. 1 ուսուց.՝ Գէորգ. ձեմար. V դաս., 1 ուս.՝ Ներսիսեան դպրոցաւարտ, 1 վարժ.՝ Թիֆլ. օր. գիմնազ. (չէ տւարտած):

Վերին Աղգան. 58 աշ. I. II. III. միացած բաժ., 1 ուսուց.՝ Ներս. դպր. (չէ տւարտած):

Աչաջուր. 55 աշ. I. II. III միացած բաժ. 1 ուս.՝ Երև. թեմ. դպրոցաւարտ:

Զարխէջ. 46 աշ. I. II. III միաց. բաժ. 1 ուս.՝ քաղ. դպրոցաւարտ:

Պօղոքիլիսայ. 55 աշ. I. II. III բաժ., առաջին Երկու բաժ. միացած. 1 ուս.՝ Ներս. դպրոցաւարտ, 1 ուսուց. կրթ. ցենզ չունի:

Դիլիջան, 173 աշ. I. II. III. IV. V բաժ., վերջին Երկու բաժ. միացած.: 1 ուս.՝ Գ. Ճեմար., 1 վարժ. Բագրի գիմնազաւարտ, 2 ուս.՝ Ներս. դպրոցաւարտ, 1 ուս.՝ Թիֆ. արհեստագիտ. դպրոցաւարտ (ունի Երկար տարիների ուս. փորձառութիւն):

Չիբուխի. 105 աշ., ? բաժ., 1 ուս.՝ Երև. թեմ. դպր. IV դաս., 1 ուսուց.՝ հՀ մի կըթական ցենզ:

Օրտակու. 55 աշ. I. II. բաժ. 1 ուս.՝ Երև. թեմ. դպրոցաւարտ:

Փաշաքենդ. 78 աշ. I. II. III. բաժ. 1 ուս.՝ Բագրի Ռէալ. դպրոցից, 1 վարժ. Գորւայ ծխ. դպր., 1 ուս.՝ Երև. թեմ. դպր. III դաս.:

Նորադուզ. 71 աշ. I. II բաժ. 1 ուս. Նորբ. քաղաքային դպրոցաւարտ, 1 ուս.՝ Ն. Բայազ. հ. ծխակ. դպրոցաւարտ:

Ներքին-Ախտա. 80 աշ. I. II. III. IV բաժ. վերջին 3 բաժ. միացած., 1 ուս.՝ Ներս. դպրոցաւարտ և Մոսկվայի համալս. իրաւ. ֆակուլտ. ուսանող, 1 վարժ. Յովնանեան դպրոցաւարտ:

Ոնդամալ. 85 աշ. I. II. III. IV բաժ. առաջին Երկու բաժ. միացած. նոյնպէս և III. IV բաժ.: 1 ուս.՝ Երև. թեմ. դպրոցաւարտ, 1 ուս.՝ Զաքաթ. քաղ. դպրոցից:

Սօլակ. 37 աշ. I. II միաց. բաժ.՝ 1 ուս.՝ կրթ. ցենզ չունի:

Այլաբատ. 57 աշ. I. II. III բաժ. առաջին 2 բաժ. միացած. 1 ուսուց.՝ առևտրական դպր. դ. դաս., ունի ուսուց. ցենզ.

Եարմջա. 40 աշ. I բաժ., 1 ուս.՝ Գէորգ. Ճեմար. Զ. դաս.

Ռիփա Նորաշէն. 80 աշ. I և II միաց. բաժ., 1 ուս.՝ Երկանի ուսուցչ. Սեմինարեան աւարտած:

Տիլիֆ. 70 աշ. I. II միաց. բաժ., 1 ուս.՝ Ախալք. քաղ. և տեղ. ծխ. դպր.

Բարանայ. 40 աշ. I, II, III միաց. բաժ., 1 ուս.՝ Գէորգ. Ճեմար. լսարանները աւարտած.

Մամղարայ. 63 աշ. I, II, III բաժ., 1 ուս.՝ Երև. թեմ. դըպրոցաւարտ:

Կախ-Աւան. 65 աշ. I, II, III, IV, բաժ. առաջին և Երկր., Երրորդ և չորրորդ բաժ. միացած, 1 ուս.՝ Շուշ. թեմ. դպրոցաւարտ, 1 ուս.՝ Գորեոյ ուսուցչ. Սեմինարիան աւարտած, 1 վարժ.՝ գիմնազ. Զ. դաս.:

Սազրէլ. 57 աշ. I, II, III միաց. բաժ., 1 ուս.՝ Թիֆլ. Աստուածածնի ծխ. դպրոցաւարտ:

Փոթի. 30 աշ. I. II. միաց. բաժ., 1 ուս.՝ Գ. Ճեմար. լսարաններն աւարտած:

Տանճոտ. 115 աշ. I. II. III. IV բաժ., առաջին և Երկրորդ, Երրորդ և չորրորդ բաժ. միացած: 1 ուս.՝ քաղ. դպր. և Ներսիսեան դպրոցաւարտ, 1 ուս.՝ կրթ. ցենզ չունի:

Գիւմբուրդա. 80 աշ. I. II. III բաժ., 1 ուս.՝ Ներս. դպրոցաւարտ, 1 ուս.՝ Ախալք. քաղ. դպր.

Վելիացիսէ. 45 աշ. I. II. III միաց. բաժ., 1 վարժ.՝ Յովնասեան դպրոցաւարտ:

Լազօղախ. 49 աշ. I. II. III բաժ. վերջին Երկու բաժ. միացած, 1 ուս.՝ Ներս. դպր. (չէ աւարտած), ունի ուսուցչ. ցենզ, 1 ուս.՝ քաղ. դպրոցաւարտ:

Գիւլլագարակ. 40 աշ. I. II. միաց. բաժ., 1 ուս.՝ Գէորգ. Ճեմար. Զ. դաս. և Ա. լսար. աւարտած,

Օլթի. 107 աշ. I. II. III. IV բաժ., վերջին Երկու բաժ. միացած: 1 ուս.՝ Ներս. դպրոցաւարտ, 1 ուս.՝ քաղ. դպր. և ունի ուսուցչ. ցենզ, 1 ուս.՝ հ. ծխական դպր., 1 վարժ.՝ Ալէքս. գիմն. աւարտ., 1 վարժ.՝ ցենզ չունի:

Դուշէթ. 35 աշ., I. II. միաց. բաժ., 1 վարժ.՝ Թիֆլ. օր. գիմն. աւարտ.

Ներքին կարմիր-աղբիւր. 40 աշ., I. II. III. միացեալ բաժ., 1 ուս.՝ կրթ. ցենզ չունի:

Ղալաչայ. 25 աշ. I. II. III. միաց. բաժ., 1 ուս.՝ Ներս. դըպրոցաւարտ.

Թովուզ. 92 աշ., I. II. միաց. բաժ. և III. IV կրկին միաց. բաժ., 2 ուսուցիչ, Երկուսն էլ Ներս. դպրոցաւարտ:

Տամալայ. 55 աշ. I. II. III. միաց. բաժ., 1 ուս.՝ քաղ. դըպրոցաւարտ:

Շուռութ. 55 աշ. I. II. III. բաժ. առաջին Երկու բաժ. միացած, 1 ուս.՝ Ներս. դպր. Գ. դաս.

**Փարադաշտ.** 75 աշ., I. II. III. բաժ., առաջին երկու բաժ. միացած, 1 ուս.՝ ներս. դպր. V դաս.:

**Ազա.** 61 աշ. I. II. III. բաժ., 1 ուս.՝ երկ. թեմ. դպրոցաւարտ, 1 վարժ.՝ (ցենդ ?):

**Դոշղոթան,** 23 աշ., I. II. միաց. բաժ., 1 ուս.՝ Գ. ճեմար. Դ. դաս., 1 ուս.՝ Գանձակի արհեստ. դպր.:

**Խոզնաւար.** 100 աշ. I. II. III. բաժ., 1 ուս.՝ ներս. դպրոցաւարտ:

**Բաշկադիկլար,** 47 աշ., I. II. III միաց. բաժ., 1 ուս.՝ Գ. ճեմ. VI դաս.:

**Փիրւաւի.** 84 աշ. I և II. միաց. բաժ., III և IV միաց. բաժ., 1 ուս.՝ Տաճկաստ. Արմաշի դպրեվանքում սովորած, 1 ուս.՝ կարսի քաղ. դպր.:

**Մաւրակ.** 54 աշ., I. II. III. միաց. բաժ., 1 ուս.՝ Գ. ճեմար. Ե. դաս.:

**Ալէլու.** 65 աշ. I. II. III. բաժ., վերջին երկու բաժ. միացած, 1 ուս.՝ Գորւայ ուս.՝ սեմինարիան աւարտած, 1 վարժ.՝ ցենդ չունիւ:

**Ղազանֆար,** 40 աշ. I. բաժ. 1 ուս.՝ Գէորգ. ճեմար:

**Ալըղոխ,** 35 աշ. I. բաժ., 1 ուս.՝ ներս. դպր.:

**Ներքին-Գեօգալդարայ,** 53 աշ. I. I. III. միաց. բաժ., 1 ուս.՝ ներսիսեան դպրոցաւարտ:

**Դպրոցը**—դա ինքը ուսուցիչն է. դպրոցում ուսման առաջադիմութեան գործում միակ մեծ դերը կատարում է լաւ պատրաստած ուսուցիչը. սակայն մեր ուսուցիչների մի մասը բաւարար պատրաստած չէ իր պատասխանառու պաշտօնի համար. կարիք է զգացւում մի յատուկ ուսուցչանոցի, իսկ առ այժմ այդ կարիքը կարող էին լրացնել մեր թեմական դպրոցները, եթէ բանային մանկավարժական մասնագիտական դասարաններ մէկ կամ երկու տարւայ դասընթացով:

Ներկայումս մեր դպրոցներում խոշոր պակասութիւն է զգացւում օրինակելի դասագրքերի, նաև մայրենի լեզուի առանձին դասագրքի կարիքը, յատկապէս վիրախօս և թուրքախօս վայրերում գտնուած դպրոցների համար, անհրաժեշտութիւն է ներկայացնում: Մի գովելի գործ կատարած կը լինեն այդ վայրերում պաշտօնավարած՝ հմուտ ուսուցիչները, եթէ օր առաջ զբաղուեն այդ խընդ-

ըով և հէնց առաջիկայ ուս. թ. սկզբին հրատարակեն այդպիսի ձեռնարկներ:

Ի՞նչ կարող է անել նոյն իսկ լաւ ուսուցիչը, եթէ դպրոցը զուրկ է ամենակարևոր պիտոյքներից: Նոյն իսկ դպրոցական շէնքերը, մասնաւորապէս գիւղերում, խիստ անյարմար են պարապմունքների համար: Ահա մի խոշոր պակասութիւն ես, որին շատ դիւրին կերպով կարող էր բաւարարութիւն տալ հէնց տեղական շահագրգուած համայնքը՝ ընդհանուր ոյժերով: Հարկաւոր են միայն նախաձեռնողներ.

Մեր ժողովուրդը խիստ կարիք ունի նաև աշխատանոցների, ինչպիսին են, օրինակ, տրհեստանոցներ, որ շատ վայրերում, և՛ ընկերութեանս ճիւղերի շնորհիւ, արդէն գոյութիւն ունեն:

Մի խոշոր կարիքի—գիւղատնտեսական դպրոցների—մասին ևս հոգացել է խորհուրդն. այդ նպատակով կազմել է մի մասնաժողով՝ Թիֆլիսում ապրող աշքի ընկնող հայ գիւղատնտեսներից և գիւղատնտեսական դպրոցի գործին գիտակ անձանցից, որոնք մշակել են ծրագրներ՝ այդպիսի դպրոցը երե համար \*): Ի նկատի ունենալով գիւղատնտեսական հիմնարկութիւնների կարեռութիւնը, խորհրդիս գիմունքներ են անում և մասնաւոր անհատներ, որոնք իրենց դրամական աջակցութիւնն են խօստանում, եթէ ընկերութիւնս այդ խնդրում նախաձեռնողի դերում լինի և հոգայ նաև այդպիսի դպրոցների իրականացմանը:

Այդ առթիւ լուրջ ուշագրութեան արժանի է և Հին-Նախիջեանի 18 հայ գիւղերի առաջարկը. այդ գիւղերը իրենց պատրաստակամութիւնն են յայտնում համախօսականներով պարտաւորւելու գիւղատնտեսական դպրոցի ծախքերը հոգալ այն դէպում, եթէ ընկերութիւնս նախաձեռնէ հիմնել և իր հսկողութեան տակ առնել ապագայ գիւղատնտեսական դպրոցը:

Դպրոցական գործնէութիւնը, լինելով ընկերութեանս աշխատանքների ամենակենդրոնական և էական մասը, խորհուրդս իր լուրջ ուշագրութիւնն է դարձնում, ի հարկէ, և այն հանգամանքի վրա, որ կրթական այդ հիմնարկութիւնները իրօք իրենց նպատակին ծառայեն և աշխատում է դրանց գրութիւնը հետզհետէ

\*.) Այդ մասնաժողովի աշխատանքների մասին, ընթերցողը կը գտնի սոյն տեղեկագրում աւելի մասնամասն տեղեկութիւններ:

բարւօքել թէ տնտեսականի և թէ ուսումնականի կողմից։ Այդ նպատակով ընկերութիւնս ձեռնարկելու է գիւղական դպրոցներին կից հիմնելու նաև գրադարաններ, որոնք գարձեալ մեծ ծախքեր են պահանջում։

Ունենալ պատրաստուած, կարող ուսուցչով կանոնաւոր գըպ-ըսց, գրան կից՝ գրադարան-ընթերցարան՝ մանկավարժական և այլ թերթերով, փոքրիկ դեղատնով \*), որից կարողանայ օգտուել նաև գիւղական հասարակութիւնը, —ահա ինչի է ձգտում ընկերութիւնս։ Ի հարկէ, աւելորդ է շեշտել և այն մասին, որ խորհուրդս կաշխատէ գիւղական ուսուցչի ոռնիկն աւելացնել գոնէ այն չափով, որ հնարաւորութիւն ունենայ խուլ անկիւնները գրաւելու աւելի ձեռնընաս ուսուցիչների, որոնց կրթական ցենզը դպրոցական գործի յաջողութեան ամենաառաջին պայմաններից կարեորագոյնն է։

Կռվկասահայ ժողովրդի կեանքում կրթական կուլտուրական այսքան պակասութիւններին գոնէ նուազագոյն չափով բաւարարութիւն տալու համար՝ անհրաժեշտ է միահամուռ լայն օժանդակութիւն թէ հիմնարկութիւնների և թէ մասնաւոր անհատների կողմից։

Առաջիկայ ուսումն. թ. խորհուրդս անպայման կաշխատի ընդարձակել դպրոցական իր գործնէութիւնը, որովհետեւ անկարելի է անուշադիր թողնել գաւառներից մեզ հասած այնքան սըրտաճմլիկ կերպով նկարագրած խաւարի ու տգիտութեան մասին տեղեկագրեր, որով բազմաթիւ համայնքներ իրենց յուսալի հայեցքը դէպի ընկերութիւնս յառած՝ խնդրում են աջակցել և հսարաւութիւն տալ նրանց դպրոց ունենալու։

\*) Այդպիսի դեղատներ արգէն ուղարկուած են մի քանի տեղեր և պահում են ընկ. նպաստով պահպանուող դպրոցներում։ Խորհուրդս արգէն պատուէր է տուել այդպիսի դեղատների և առաջիկայում կուղարկէ այն վայրերը, ուր կարիքն աւելի մեծ է։

### ԳԻՒՂԱԾՆՏԵՍԱԿԱՆ ՄԱՍՆԱԺՈՂՈՎԸ

Անցեալ 1908 թուի նոյեմբեր 14-ին Թիֆլիզում ապրող հայ գիւղատնտեսներ, Աբովեան Սարգիս, Աթանասեան Աշ., Գեօղալեան Տիգրան, Մելիք-Բախտամեան Յ., Շահպաղեան Յովհ., Սահակեան Աւ., Փիրալեան Յար., ստանալով կովկասի կայոց Բարեգ. Էնկերութեան խորհրդի նախագահ պ. Ս. Յարութիւնեանի հրաւերը, ուրով յայտնելով թէ «խորհուրդը որոշել է խատրաստել ծրագիր յատուկ գիւղատնտեսական ուսուցչանոցի և գիւղատնտեսական բաժանմունքների, ծխական դպրոցներին կից, որպէսզի այդ ծրագրով առաջիկայ տարուանից բանայ գիւղատնտեսական բաժանմունքներ և գիւղատնտեսական ուսուցչանոց», խնդրում էր «այդ նպատակի համար կազմել մի մասնաժողով և պատրաստել ծրագիր»։

Նոյն օրը ընկերութեան շինութեան մէջ ժողովուեցին բոլոր յիշուած գիւղատնտեսները, ներկայութեամբ պ. Ս. Յարութիւնեանի, խորհրդի անդամներ պ. պ. Ս. Բալաղեանի և Ս. Մելքումեանի և քըն-նութեան առնելով խորհրդի առաջարկը, որոշեցին. սկսած այս օրուանից երեք ամիս ժամանակով կազմել գիւղատնտեսական մի մասնաժողով, նախագահութեամբ պ. Աւ. Սահակեանի և Քարտութեամբ պ. Աշ. Աթանասեանի, քննելու համար խորհրդի առաջարկը և կազմելու գիւղատնտեսական դպրոցի ծրագիրը ու ներկայացնելու խորհրդին։

Այնուհետև մասնաժողովը ունեցաւ մի շարք խորհրդակցութիւններ, որոնց, բացի վերոյիշեալ մասնագէտներից, մասնակտում էին պ. պ. Ս. Էյրանեան, Մ. Մուշայեան և Կ. Մելիք-Շահնազարեան։ Մասնաժողովի նիստերին ներկայ էին լինում նաև պ. պ. Բալաղեան և Ս. Մելքումեան։

Մասնաժողովը մանրամասն քննութեան առնելով մեր ժողովրդի գիւղատնտեսական պայմանները և կարիքի չափը՝ գիւղատընտեսական ուսման և օգնութեան խնդրում, որոշեց. ա) չունենալ

ծխական դպրոցներին կից գիւղատնտեսական բաժանմունքներ—իբրև արդէն շատ անգամ փոքր՝ ուշած մի անաջող միջոց—գիւղատնտեսական գիտութիւնը տարածելու, այլ կազմել յատուկ գիւղատնտեսական—մասնագիտական դպրոցների ծրագիր։ Այս տեսակ դպրոցներից մասնաժողովը կանգ առաւ ստորին կարգի դպրոցների վրայ, որպէս թէ աւելի էժան նստող և թէ աւելի գործնականի և մատչելի՝ ժողովրդի համար, ուստի և որոշեց այդ դպրոցների ծրագրով և նախահաշւով զբաղուել։ Միաժամանակ մասնաժողովը գտաւ, որ մեր երկիրը շնորհիւ իր բազմազան կլիմայական, հողային և այլ պայմանների, կարիք ունի ոչ թէ մի տիպի դպրոցի, այլ երեք—այն է՝ 1) լեռնային-կաթնատնտեսական-անասնապահական, 2) զոււ երկրագործական-պարտիզապահական (միջին սարահարթերի համար) և 3) դաշտային այգեգործական, այն պայմանով, որ դրանցից իւրաքանչիւրին կից լինին նաև այդ շրջանների համար գիւղատնտեսական այլ ձիւղերի պարագանքներ—որպէս օժանդակ դիտութիւններ։

Իր այս որոշումից յետոյ, մասնաժողովը անցաւ ծրագիրներ և նախահաշիւններ կազմելու գործին, որը և յանձնեց իր միջից ընտրած մի յատուկ յանձնաժողովի, կազմւած հետեւալ անձերից՝ պ. պ. Աբովեան, Մելիք Բախտամեան, Գիւղալեան և Մուչայեան, որոնք և պատրաստելու էին ծրագիրն ու նախահաշիւը և ներկայացնելու գիւղատնտեսական մասնաժողովի քննութեանը։

Յանձնաժողովը 10—12 նիստերում բաժաննելով իր մէջ աշխատանքը ըստ մասնագիտութեան, երեք ամսւայ ընթացքում կատարեց իր գործն և մարտ ամսի սկզբին ներկայացրեց գիւղատնտեսական մասնաժողովին, որը ծանօթանալով մանրամասնութեանց հետ և ենթարկելով այլ և այլ փոփոխութեան, ընդունեց ամբողջովին և մարտ ամսի վերջին յանձնեց բարեգործ։ ընկերութեան խորհրդին։

Ներկայացրած գիւղատնտեսական դպրոցի ծրագրի նախագիծը աչքի առաջ ունի հետեւալ զինաւոր կէտերը։ ա) Դպրոցներում ուսման ողջ ընթացքը լինելու է քառամեայ. բ) Դպրոցի առաջին դասարան ընդունուում են այն աշակերտները, որոնք աւարտած կըլինեն եկեղեցական—ծխական դպրոցների չորս տարւան դասնթացը։ գ) Ուսուցման առարկաները բաժանւում են երկու կարգի. 1) ընդհանուր զարգացողական, որոնք կազմում են մեր ծխական դպրոց-

ներում աւանդւող առարկաների անմիջական շարունակութիւնը՝ արդէն լրացւած և ամբողջացած և 2) զուտ մասնագիտական առարկաներ գիւղատնտեսութեան այն ձիւղերից, որ տիպը որ գերադասելի կը համարվէ տւած դպրոցում (անասնապահական, երկրագործական և այգեգործական), որով այդ դպրոցներում աւանդւող բոլոր առարկաների թիւը հասնում է 21-ի։ դ) Դպրոցում ընդունում են թէ գիշերոթիկ և թէ երթևէկ աշակերտներ. աշակերտների ընդհանուր թիւը հասնում է 120—150 ի։ ե) Դպրոցը տալու է գործնական կեանքի համար պատրաստւած երկրագործ—մասնագէտներ, որոնք կարող կլինեն թէ ինքնուրոյն կերպով վարել իրենց անտեսութիւնը և թէ ուսուցիչներ դառնալ մեր ծխական դպրոցներում։ Ուսուցչական կազմը բաղկացած է լինելու մի կառավարչից—բարձրագոյն մասնագիտական կրթութեամբ, մի բնագէտից նոյնպէս բարձրագոյն կրթութեամբ, երկու միջնակարգ ուսուում ստացած մասնագէտներից (շերամապահ-մեղուաբոյժ, այգեգործ-պարտիզական) և երեք ուսուցիչներից՝ միջնակարգ ուսումնական կրօն, հայոց լեզու, ուռւաց լեզու, թւաբանութիւն և այլն), որոնք բոլորն էլ ապրելու են դպրոցի շէնքի մէջ կամ նրանից ոչ հեռու (բացի կառավարչից և մասնագէտներից, որոնց դպրոցում ապրելը անհրաժեշտ է։ է) Դպրոցներից առաջին տիպը—կաթնատնտեսական-անասնապահականը ունենալու է 350 դեսետին հող իր տընտեսութեան համար, երկրորդը՝ երկրագործական—պարտիզականականը՝ 250 դեսետին, որից 100-ը վարելանող, իսկ երրորդը՝ այգեգործական-երկրագործականը՝ 50 տեսետին ջրովի հող, որից 10 դեսետինը խաղողի այգի և պտղատու պարտէզ։

Դպրոցի նախահաշիւը կազմւած է այսպէս։

Տիպ I. Կաթնատնտեսական-անասնապահական։

1) Դպրոցի գլխաւոր շէնքի համար	.	.	.	8000	լ.
2) Սեղանատուն և խոհանոցի	»	.	.	2000	"
3) Ննջարանի և հիւանդանոցի	»	.	.	4000	"
4) Բաղնիք, լւացարան և փուռ	.	.	.	1000	"
5) Բնակարաններ ուսուցչի կազմի համար				7000	"
6) Անասուններ, անասնատուն և ինվենտարի համար շինութիւններ	.	.	.	8000	"
7) Մեղուանոց	.	.	.	1200	"

8) Թուչնատում իր ինվենտարով	400 լ.
9) Երկրագործական մեքենաներ, դործիքներ և ծածկ	2200 »
10) Դասարանական պիտոյքներ, կահ կարա- սիք և այլն	6000 »
	Ընդամենը 39,800 լ.

Տիպ II. Երկրագործական-պարտիզական:

Սրա ծախքերը նոյնն են, ինչև տիպ I-ը, միայն թէ պակասում է անսառունների թիւը՝ 4000 ըուբլիով ուրեմն. 35,800 լ. (տես նախահաշիւը այդ գպրոցի՝ ծրագիր—նախագծի մէջ):

Տիպ III. Այզեգործական-երկրագործական:

Սրա ծախքերը նոյն են, ինչ և տիպ I-ը, միայն պակասում է ինվենտարը 2000 ըուբլիով, ուրեմն 37,800 լ. (տես նախահաշիւը ծրագիր—նախագծի մէջ):

Երեք գպրոցներից իւրաքանչիւրի ուսուցչական ողջ կազմը, կառավարչով, մասնագէտներով և ծառաներով տարեկան կըպահանձի 9200—9500 ըուբլի վարձատրութիւն:

Դպրոցի միւս բոլոր ծախքերը—աշակերտների ուսման, կերակրի և այլն ծածկում է գպրոցի տնտեսութիւնից ստացւած եկամուտից: Հետևապէս այդ երեք տիպի գպրոցներից որը և լինի, պահանջում է.

ա) Զրի հող (նշանակած քանակութեամբ)

բ) Միանւագ ծախք շինութիւնների և ինվենտարի  
վրայ . . . . . 36,000—40,000 լ.

գ) Տարեկան ծախք . . . . . 9,000—10,000 լ.

Մասնաժողովը իր ծրագիր—նախագծին կցել է մանրամասն ցուցակներ՝ ուսման առարկաների, դասերի բաշխման, անհրաժեշտ ինվենտարի, գպրոցի շինութեան և ուսուցչական կազմի և այլ ծառայողների վարձատրութեան:

### ՏԱՅԿԱՀԱՅ ԳԱՂԹԱԿԱՆՆԵՐԻ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՍՈՒՆԱ- ԼՈՒ ԳՈՐԾԼ

Երբ Տաճկաստանում սահմանադրական կարգեր հրատարակվեցին, Կովկասում գտնւած բազմաթիւ տաճկահայ գաղթականներ հայրենիք վերադառնալ ցանկացան: Դրանց պէտք էր աջակցութիւն՝ թէ նիւթական և թէ բարոյական: Եւ կ. Հ. Բ. Ընկերութիւնս իր սեպուհ պարտքը համարեց զրադուել այդ խնդրով և Սեպտեմբերի 24-ին (1908) կայացած ընկ. ընդհանուր ժողովը քննելով այդ հարցը, իրաւունք տուեց խորհրդիս այդ նպատակի համար ծախսել ընկերութեանս մօտ գտնուած 2000 ըուբլին, որ վաղուց գանձւած էր յօգուտ թուրքահայ գաղթականների: Այդ ընդհանուր ժողովը յանձնաբարեց խորհրդիս դիմել նաև Թիֆլիսի կենդրօնական նպատամատոյց Յանձնաժողովին և խնդրել նրա աջակցութիւնը:

Հայրենիք վերադարձող գաղթականների թիւը հետզհետէ այնքան բազմացաւ և գործը այնպիսի լուրջ կերպարանք կրեց ու դժուարութիւններ յարուցեց, որ խորհրդուրդս յատկապէս այդ խըլ-բով զբաղելու համար ընտրեց մի մասնաժողով, հետեւալ անձանցից. խորհրդիս նախագահ՝ Սամսոն Յարութիւնեան, Գ. Գաֆեան, Վ. Փափակեան, Հ. Վահանեան, Գ. Վարդանեան, Լ. Քէհեայեան, Յ. Քոչարեան, Հ. Սոլովեան, Սարիբէկ Յարութիւնեան, Ս. Գիւլբէնցեան, Ս. Թաղիկեան, Տէր-Արիստակէսեան, Ա. Ֆէթւաճեան, այլի տիկ. Մ. Խատիսեան, Հ. Առուստամեան, Իւլիա Սպենդիա-րեան և Մ. Ցուրինեան:

Մասնաժողովում նախագահի պաշտօն կատարել են անդամներից պ. պ. Յ Քոչարեան և Գ. Գաֆեան, իսկ քարտուղարի պարտաւորութիւնը կատարել է պ. Վ. Փափակեան: Նոյն մասնաժողովին մասնակցելու համար հրաւիրւած են եղել Թիֆլիսի կենդրօնուկան Յանձնաժողովի երկու ներկայացուցիչներ՝ պ. պ. Ա. Մելիք-Աղարեանց և Ա. Արամիանեանց:

Այդ մասնաժողովը հոկտ. 1-ին (1908) ունենալով իր առաջին-նիստը, ջանացել է ամեն կերպ դիւրացնելու գործը և հսարաւորութիւն տալու հայ գաղթականներին հայրենիք վերադառնալ:

Այդ նպատակով, ի նկատի ունենալով միջոցների սղութիւնը, դիմումներ է արուած մամնաւոր անհատների և Թիֆլիսի կենդրոնական նպաստամատոյց Յանձնաժողովին, որը յիշեալ գործի համար յատկացրել է 5000 ռուբլի, որից մինչև այժմ ստացւել է միայն 2000 թ.:

Հանգանակութեան գործը աւելի դիւրացնելու համար ընտրեց մի այլ՝ հանգանակիչ մասնաժողով, հետևեալ անձանցից. տիկ. տիկ. Մ. Ս. Խատիսեան (Նախագահ), Վ. Աղամալեան, Մ. Լիանովեան, Վ. Անանեան, Մ. Լազարեան, Ո. Շահմուրադեան, Մ. Ցուրինեան, Ժ. Զարգարեան, Վ. Միլեան, Դ. Ցովհաննիսեան, Զ. Գիւլբէնգեան, Հ. Աբէլեան, Մ. Քալանթարեան, Ե. Խալաթեան, օր. օր. Տէր-Գրիգորեան և Գ. Ղազարեան, պ. պ. Մ. Գիւլբէնգեան և Գ. Գաֆեան:

Այդ մասնաժողովը, նուէրներ ստանալու համար, բաժանւելով խմբերի, ստացել է ընդամենը 3242 լ. 30 կոպ. \*):

Թիֆլիսից հայ գաղթականները երկիր են վերադարձել Կարսի, Իգդիրի և Բաթումի վրայով ընկերութեանս յիշեալ տեղերի ճիւղերի աջակցութեամբ։ Այդ կողմից գնահատելի ծառայութիւններ են արել ընկ.յիշեալ ճիւղերը, մանաւանդ Կարսի ճիւղի վարչութիւնը, որը մի քանի մասնաւոր անձանց հետ միասին ճանապարհել է 10,000-ից աւելի գաղթականներ, նախապէս բանակցութիւնների մէջ մտնելով սահմանագլխի պաշտօնատար անձանց հետ և աշխատել է ամեն դիւրութիւն ստեղծելու ու ճանապարհորդներին հնարաւորութիւն տալ անարգել տեղ հասնելու։ Ընկերութեանս աջակցութեամբ հայրենիք վերադարձած գաղթականների թիւը հասնում է մօտ 13,000-ի։

\*) Բոլոր նուիրատունների ցուցակը, առանձին թերթի վրա տպուած, ապրիլի 12-ին (1909) ուղարկուեց «Գործ»-ի և «Մշակ»-ի Թիֆլիսի բաժանորդներին՝ յիշեալ թերթերի միջոցով։

ԽՈՇՈՐ ՆՈՒԷՐՆԵՐԻ ՄԱՍԻՆ, ՈՐՈՆՔ ԵՂԵԼ ԵՆ 1908 Թ.  
ՀՆԹԱՑՔՈՒՄ

Երկար տարիների ակամայ ընդհատումից յետոյ, Կ. Հ. Բ. ընկերութիւնս նորից վերակազմւելով՝ ամեն տեղ հանդիպեց բուռն համակրանքի և կենդանի աջակցութեան։

Խորհուրդս, իր ստանաձնած դժուարին և բարձր միսիան յաջողութեամբ կատարելու համար, դիմեց հասարակութեան լայն խաւերի միահամուռ օգնութեան և առանձին հրաւերներ կարդաց նաև գրամատէրերին, որոնք, ուրախութեամբ պէտք է արձանագրել, անտարբեր չը գտնւեցին դէպի մեր ժողովրդի մտաւոր կուլտուրական խոշոր կարիքների հրամայողական պահանջների դիմաց և իրենց նույիրաբերութիւններով հնարաւորութիւն տուին խորհրդիս ձեռնարկած գործը փոքր ի շատէ աւելի լայն ծաւալով սկսելու։

Այդ նուիրատուններից առանձնապէս յիշելու է հանգուցեալ Ա. Անանեանին, պ. պ. Ա. Խ. Ղարաջեանին, Ա. Ի. Մանթաշեանին, Տ. Ն. Աֆրիկեանին, Ցովհաննէս աւ. քահանայ Տէր-Գալստեանին, որոնց՝ այդ առթիւ խորհրդիս ուղղած յատուկ գրութիւնները ստորև առաջ ենք բերում լիովին։

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան

Ի սրտէ շնորհաւորելով Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան վերակազմութիւնը, որին (ընկ.) երկար տարիների ընթացքում ծառայել և սիրել եմ, իբրև մի նշանաւոր և ազգօգուտ հաստատութեան, շատ ցաւում եմ, որ հիւանդութեանս պատճառով անկարող եմ ներկայ լինել այսօր ընկերութեանդրնդհանուր ժողովի առաջին նիստին:

Համակրելով ընկերութեանդ նոր մշակած կանոնադրութեան բոլոր նպատակները, առաւելապէս կրթականը, ես ի հաստատութիւն իմ այդ համակրանքի դէպի այդ ընկերութիւնը, նուիրում եմ այժմ ընկերութեանը քսան հազար բուդի կանխիկ գումար հետեւել պայմանով:


1) Այդ գումարը պէտք է լինի անձեռնմխելի, իբր նուեր իմ անունից:

2) Գումարի տոկոսները պէտք է գործադրւեն յատկապէս կրթական նպատակների համար, գլխաւորապէս գիւղական դպրոցների վերայ, հիմնելով նոր դպրոցներ կամ օժանդակելով նոր բացւելիք և գոյութիւն ունեցող հայ դպրոցներին:

3) Իցէ թէ ընկերութեան այժմեան կանոնադրութիւնը փոփոխութեան ենթարկել և շնորհիւ այդ հանգամանքի ընկերութիւնը անկարող լինի հայկական դպրոցներ հիմնել կամ այդպիսիներին օժանդակել, այդ դէպքում իմ ներկայ գումարի տոկոսը ընկերութիւնը պէտք է գործադրի միւս հայկական և կանոնադրութեամբ թոյլատրւելիք կարիքների վերայ:

4) Իսկ եթէ ընկերութիւնը փակուի, այն ժամանակ այս գումարը յատկացնեում է մի այլ հայկական հաստատութեան կամ նպատակի՝ ընդհանուր ժողովի որոշմամբ:

Նոր սերնդի բարոյական ու մատառը զարգացումից կախւած է մեր հայ ժողովրդի ապագան: Բարոյագիտութիւնը դպրոցներում



ԱՂԵՔՍԱՆԴՐ ԱՆԱՆԵԱՆ

† 1909 թ.

պէտք է անհրաժեշտութիւն ներկայացնի և այդ առթիւ ես կցանկանայի, որ ընկերութիւնը հետևէր Եւրոպայի, գլխաւորապէս Գերմանիայի կենդանի օինակին:

Ի գիտութիւն ընկերութեանդ հարկաւոր եմ համարում յայտնել, որ նա բացի այս քսան հազար բուբուց, կստանայ ապագայում իմ կտակով ևս տասն հազար ըուպլի: Կրկին անգամ շնորհաւորելով Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանդ վերաբացումն, խորին սրտով ցանկանում եմ ընկերութեանդ յառաջադիմութիւն՝ յօգուտ մեր ազգի: Թիֆլիս, 2 փետրվարի, 1908 թ.

Խորին յարգանօք Ա. Անանեանց.

Յ. Գ. Յարգելի պ. Սամսոն Յարութիւնեան. Ուղարկելով այս նամակը Զեզ, իրու կ. Հ. Բ. Ծնկերութեան նախագահի, խնդրում եմ այս մասին յայտնէք ընկերութեանդ այսօրւայ ընդհանուր ժողովին:

Ա. Անանեան

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդի պ. Նախագահին

**Մեծարգոյ պարոն Սամսոն Յարութիւնեան:**

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան վերակադմուելը և նրա նոր մշակած կանոնագրութիւնն իր համակրելի կրթական, կուլտուրական և բարեգործական նպատակներով, ինձ վրայ ևս, իբրև հայ հասարակութեան մի անդամի, բարոյական պարտականութիւն է դնում օժանդակել այդ Ընկերութեանը, որպէսզի նա յաջողութեամբ իրագործի իր ձգտումները, այն է՝ բարելաւելու մեր հասարակութեան աղքատ մասի դրութիւնը, տարածելով նրա մէջ լուսաւորութիւն և հոգալու թեթևացնել նրա թշուառութիւնը տնտեսական կողմից:

Ես իմանալով, որ Ընկերութիւնը որոշել է կառուցանել նոր շինութիւն իր կարիքների համար և որի համար նախահաշուով հարկաւոր է մօտ տասն և հինգ հազար ըուրի (15000), խնդրում եմ խորհրդիդ միջոցով առաջարկել ընդհանուր ժողովին ընդունել ինձնից 15,000 ր. նուէր՝ յատկապէս շինութեան համար: Շինութիւնը լինելով իբր լիակատար սեպհականութիւն Ընկերութեան, վերջինս շահեցնում է ըստ իր բարեհայեցողութեան՝ առանց սահմանափակումների: Եւ եթէ երբեցէ Ընկերութիւնը փակուի, շինութիւնը, Ընկերութեան ընդհանուր ժողովի որոշումով, յատկացնում է մի այլ ազգօգուտ նպատակի կամ հաստատութեան: Այդպիսի դէպքում (այսինքն՝ փակուելու դէպքում) Ընկերութիւնը իրաւունք ունի ծախել շինութիւնը և գումարը գործազրել նոյն նպատակների համար: 20 մարտի, 1908 թ.:

Խորին յարգանօք, Պիտրովսկի վաճառական՝

Աղէքսանով Խաչատուրեան Ղարաջեանց:  
Ժանօթովթիւն. Շինութիւնը կառուցանելիս պարզուեց, որ նշանակուած գումարը բաւական չէ և պ. Ա. Ղարաջեանը, իմանալով այդ հանգամանքը, սիրալիր կերպով ընդունեց իր վրայ բոլոր ծախսերը, որքան հարկաւոր կը լինի շինութիւնը աւարտելու համար: (Շինութեան մասին՝ տես եր. 51):

**Պ. Ա. Խ. ՂԱՐԱՋԵԱՆԻ ՀԱՇՈՒԻՇՎ ԿԱՌՈՒԹՅԱԾ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԵԲՆՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ**

Խորհուրդու, ստանալով պ. Ա. Ղարաջեանի վերոյիշեալ նամակը, (գրուած 20 մարտի 1908 թ.) մարտի 22-ին (1908) ներկայացրեց ընկ. ընդհանուր ժողովին: Ընդհանուր ժողովը խորին շնորհակալութեամբ ընդունեց պ. Ա. Ղարաջեանի առաջարկութիւնը և նրան, այդ նւիրատւութեան համար, ընտրեց Ընկերութեանս պատւառոր անդամ և թոյլ տուեց խորհրդիս սկսել շինութեան կառուցումը Ընկերութեանս պատկանեալ հողի վրա, որ գնուած է պ. Արէշեանից և կից է Խուղագեանի նուիրած տանը:

Շինութեան կառուցումը սկսուեց մայիս (1908 թ.) ամսից և աւարտուեց հոկտեմբերին (1908 թ.): Հէնքի վրայ ծախսուեց ընդունենք 22,187 ր. 48 կոպ: Այդ գումարը լիովին վճարել է պ. Ա. Ղարաջեանը:

Կարևոր ենք համարում յիշատակելու, որ այդ շէնքը կառուցուած է խորհրդիս անդամ ճարտարապետ Ս. Դ. Լիսիցեանի մակարդակով և հսկողութեամբ: Հսկողութեան դործում առանձին աշխատանք է մատուցել նաև ընկ. անդամ Ա. Ի. Շահիկեանը:


Շինութեան կառուցման համար կազմւած էր և յատուկ մասնաժողով, որի անդամներն էին պ. պ. Ա. Մելքոնյան, Ա. Շահիկեան և Մ. Գաֆեան, իսկ մասնագիտական հարցերի քննութեան դէպքում սիրալիր կերպով մասնակցել են ճարտարապետներ պ. պ. Մելքոնյանի յարկը ունի 1 դահլիճ իր նախասենեակով, որ ծառայում է ընդհանուր ժողովների, երեկոյթների և դասախոսութիւնների համար:

Միջին յարկը ունի 6 սենեակ և 1 նախասենեակ. ունեակներից երկուսում տեղաւորում է խորհրդիս դիւանը և դրասենեակը

կը, երկուսը յատկացրած է գրադարան լնթերցարանին, 1-ը՝ ծառաների բնակութեան համար, իսկ 1-ում տեղաւորուած է ընկերութեանս արխիւր:

Ներքին յարկը ունի 3 սենեակ, 1 խոհանոց և 1 նախասենեակ. սենեակներից 1-ը ձրիաբար և ժամանակաւորապէս տրուած է կովչայոց Ուսուցչական Միութեան, իսկ մնացած սենեակներում տեղաւորուած է ընկերութեանս ձրի և էժանագին ճաշարանը:

Շինութեան վերին յարկի մեծ դահլիճում մի առանձին մարմարեայ տախտակի վրայ մակագրուած է՝ «Այս շինութիւնը կառուցուած է Աղեքսանդր Քրիստափորեան Ղարաջեանի ծախքով»  
1908 թ.»:



ԱԴՐԻՍԱՆԴՐ ՄԱՆԹԱՇԵԱՆ

Մեծապատիւ պարոն Նախագահին Կովկասի Հայոց Բարեգործական  
պատութան Ընկերութեան ի Տիկիսիս.

Ստացայ պատուարժան Խորհրդիդ 18 յունիսի նամակը՝ Կովկասում վարժարաններ բաց անելու հարցի վերաբերեալ։ Ես արդէն գրած եմ Տիկիսի մեր գրասենեակը, որ 20,000 ր. անուանական արժողութեամբ Կредитու Օբլիգացիաներ գնեն և յանձնեն Խորհրդիդ, որպէս զի այդ դրամագլուխը անձեռնմխելի պահելով, տոկոսը (տարեկան 900 ր.) գործ ածէ նոր բացւելիք դպրոցների համար։  
Խորապէս շնորհակալ եմ այն զգացմունքների մասին, որ պատուարժան Խորհուրդի արտայատում է իմ նկատմամբ, իր վերոիշշեալ գրութեամբ։

Մնամ Զերդ Ա. Մանթաշեան

Պարիդ, 1/14 լուլիսի, 1908.

Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդին

Ախալքալակ գիւղի (Գօրուայ գաւառի) աւագ քահանայ Տէր  
Յովհաննէս Տէր-Գալստեանից

Յ ա յ ս ա ր ա ր ո ւ թ ի ւ ն

Յիշեալ Ախալքալակ գիւղում ես ունիմ սեպհական երկու քա-  
րէ տուն և մէկ այգի։ Գտնուելով ծերութեան մէջ, ես ցանկա-  
նում եմ իմ կալուածները նուիրել Բարեգործական Ընկերու-  
թեանդ, հետեւեալ պայմաններով։ ա) Այդ կալուածները պէտք է շա-  
հագործուեն Ախալքալակ գիւղի հայ հասարակութեան կարիքների  
համար, գլխաւորապէս կրթական կարիքների։ բ) Կալուածներից նոր  
մեծ տունը պէտք է ծառայէ դպրոցի շինութեան համար և անցնում  
է ընկերութեանդ անմիջապէս, իսկ հին տունը և այգին անցնում  
են ընկերութեանդ՝ իմ մահից յետոյ։ Այս կալուածները յանձնում եմ  
օրինական թղթով (ընծայաբերական կամ կուպչիով)։ Խնդրում եմ  
խորհրդից տալ ինձ գրաւոր պատասխան՝ այս յայտարարութեանս  
մասին, 20 յունիսի, 1908 թ. Թիֆլիս։

Աւելացնում եմ հետեւեալը ևս իցէ թէ կ. չ. Բարեգործական  
Ընկերութիւնը փակուի կամ անկարող լինի, իրաւունքի տեսակէ-  
տից, պահպաննել Ախալքալակ գիւղում մի որկիցէ ազգօգուտ հասա-  
րակական հիմնարկութիւն, այդ դէպքում կալուածները անցնում  
են տեղական լուսաւորչական ա. կարապետ եկեղեցու սեպհակա-  
նութիւն։

Յովհաննէս աւ. քահանայ Տէր-Գալստեան

Ժանօթութիւն. Հայր Տէր-Գալստեանի նուիրած կալուածները  
գնահատուած են 20,000 ր.։ Այդ կալուածներից նոր շինութիւնը, որը  
կառուցուած է յատուկ դպրոցական կարիքների համար, անցել է  
ընկերութեան տրամադրութեան տակ և այդ շինութեան մէջ ժա-  
մանակաւորապէս զետեղուած է տեղական հիւանդանոցը (ուժական ժամանականոցը) տարեկան 500 լ. վարձով։



ՅՈՎՀԵՆՆԻՍ ԱՎ. ՔԱՀԱՆԱՅ ՏԷՐ-ԳԱԼՍՏԵԱՆ



Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեան Խորհրդին


Իմ որդի Խաչատուրի միջոցով յայտնած էի խորհրդիդ, որ ես ցանկանում եմ յանձնել Զեղ գումարներն՝ իմ նպաստով բացւած գիւղական ուսումնարանների, նոյնպէս և զանազան հիմնարկութիւնների, այս 1908 թ. սեպտեմբերից, որի մասին յայտնած էիք Զեր համաձայնութիւնը, ուստի ուղարկում եմ ցուցակը:

Տփխիսի հայոց գրամատիքական ընկերութեանը՝ տարեկան 1000 ը., երեանի թեմական դպրանոցին՝ տարեկան 1000 ը., երեանի Մարդաբանութեան Օրիորդաց դպրոցին՝ տարեկան 200 ը., Զերեանի բուլի գիւղի ուսումնարանին՝ տարեկան 500 ը., Ներքին Ախտայի՝ 500 ը., Ռնդամալի՝ 300 ը., Կարբի՝ 900 ը., Բազարջուի՝ 500 ը., Ռնդամալի՝ 300 ը., Ուլիա-Նորաշէնի (Շարուր Դարանարաշէնի)՝ 300 ը., Նորադուզի՝ 300 ը., Ներքին Գեօղարդարայի՝ 300 ը., Օրդակլուի՝ 500 ը., Յամաքարերդի՝ 300 ը., ընդամենը 6,900 ը.:

Զեղ յարգող Տ. Աֆրիկեան.

1 Մարտի, 1908 թ.

Տփխիս



Տիգրան Աֆրիկեան

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԴԱՒԹԵԱՆ ԽՈՒԴՅԱԴԵԱՆԸ

Վախճանուած 26 ապրիլի 1907 թ., ինչպէս յայտնի է, կը-  
տակով նուիրել է ընկերութեանս իր համարեա ամբողջ կարողու-  
թիւնը, այն է՝

1. Երկարկանի մի տուն (Աքասաբաթեան հրապարակում), ուր  
այժմ զետեղուած է ընկերութեանս որբանոցը,

2. Մի քարւանսարայ (Ակիմովսկի և Ռուժեյնի փողոցների ան-  
կիւնում), որը ընկերութիւնս վերաշնեց և որը այժմ բաղկացած  
է 24 խանութից ու 4 նկուղից:

3. Բանկային արժէթղթեր և շարժական այլ կայք, որ նոյն-  
պէս վերածուել է արժէթղթերի՝ ընդամենը 57,803 ը. (ռենտա-  
ներ՝ 28,000 ը., Թիֆլիսի առետրական բանկի՝ 80 ակցիա՝ 28,000  
ը., և Ա Խաղարկութեան տոմսեր՝ 1803 ը.):

Հանգուցեալի յիշատակին և նրա նուիրած գումարներով ու յա-  
տուկ ցանկութեամբ, որբ աղջիկների համար Թիֆլիսում պահուած  
է որբանոց, որի մասին սոյն տեղեկագրում ընթերցողը կը գտնի  
առանձին զեկուցումն. (Տես եր. 10)



ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՒԴՅԱԴԵԱՆ  
† 1897 թ.





Եղիս. ԲՈՒԻԴԱՂԵԱՆ  
† 1907 թ.

### Եղիս. ԳԱԼՍՏԵԱՆ ԲՈՒԻԴԱՂԵԱՆԻ<sup>1</sup>

Բագուհի առաջին կարգի վաճառական, 1907 թ. մայիսի 15-ին Օդեսայում վախճանուեց և թողեց մի կտակ, որը կազմուած է՝ 25 ապրիլի, 1898 թ. Բագուհի Հանգուցեալը իր այդ կտակում ազգային զանազան հաստատութիւններին գումարներ է նշանակել, ինչպէս նաև Կովկասի Հայոց Բարեգործական Ընկերութեանս՝ 10,000 ըուբլի:

Երջանկայիշատակ բարելարի այրի Սօֆիա Անտոնեան Բուտաղեանը, դեկտ. 7-ին 1907 թ., մի դրութեան հետ միասին, ընկերութեանս յանձնեց կտակած յիշեալ 10,000 ըուբլին:

Որովհետև նուիրատուն գումարի գործադրութիւնը թողել է Ընկերութեանս իրաւասութեան, ուստի Ընկերութեանս 1908 թ. Ընկերութեանս իրաւասութեան, ուստի Ընկերութեանս 1908 թ. Ընդհանուր ժողովը ընդունեց յիշեալ գումարը և որոշեց գործադրել միայն նրա տոկոսները առայժմ գիւղական դպրոցների վրա և ի յարգանս նուիրատուի յիշատակի, հանգուցեալի մեծադիր լուանկարը կախել Ընկերութեանս խորհրդարանում:

1908 թ. ՀՆԹԱՑՔՈՒՄ Կ. Հ. Բ. ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆՍ ԱՆՈՒՆՈՎ  
ՍՏԱՑՈՒԱԾ ԵՆ ՆԱԵՒ ՀԵՏԵՒԵԼ ՆՈՒՐԴՆԵՐ

Սերգէյ Սօլ. Յարութիւնեան	.	.	.	1	լ.
Մ. Լիսիցեան	.	.	.	3	»
Խ. Աֆրիկեան	.	.	.	7	»
Հրաչեայ Սարաֆեան	.	.	.	50	»
Խ. Աֆրիկեան	.	.	.	10	»
Նաւթ.-արդ. ընկ. Միլզոյեաններ	1000	»			
Նաւթ.-արդ. ընկ. Պիտոկ	.	.	100	»	
Գր. Կ. Կուզանով	.	.	.	10	»
Նաւթ.-արդ. ընկ. Մանթաշեան	.	100	»		
Եղբ. Բաղդասարեաններ	.	.	25	»	
Եղբ. Սէյլանեան	.	.	.	10	»
Եղբ. Բ. և Կ. Վարդանեան	.	.	20	»	
Եղբ. Միլովներ	.	.	.	25	»
Մ. Ռազիմով	.	.	.	5	»
Ս. Խալխալեան	.	.	.	5	»
Եղբ. Աւետիսեան	.	.	.	10	»
Ա. Առոմեան	.	.	.	5	»
Մութափեաններ	.	.	.	25	»
Ա. Գիւլբէնկեան	.	.	.	10	»
Մ. Մարտիրոսեան	.	.	.	5	»
Յակոբեան	.	.	.	5	»
Խարակ	.	.	.	5	»
Զաւչանիձէ և Գւելիսիանի	.	.	.	5	»
Գ. Զիլինկիրեան	.	.	.	5	»
Թ. Ներսիսեան	.	.	.	10	»
Առկար. տուն Պողոսեան	.	.	.	5	»
Խ. Թ.....եան	.	.	.	10	»
				5	»

ԳԵ. ՏԵՐԻ ԳՐԻ ՊՈՐԵԱՆԻՑ, ի յիշատակ  
իր հանգուցեալ դուստր Վար-  
դանոյշի . . . . . 25 թ.

Գումար՝ 1795 թ. 50 կ.

Տիկ. Մ. Դ. Ղարաջեան նուիրել է	4	կտոր	բամազեայ
»	»	12	» հագուստեղին
» Մ. Կուսիկեան	»	10	»
» Վ. Վ. Թամամշեան	»	9	»
Պ. Ա. Գաֆեան	»	16	»
Բ. Թադէսսեան	»	10	»
Պ. Ա. Խ. Ղարաջեան	»	9	»
» Վիսօցկի և ընկ.	»	1½ ֆ. թէյ՝ որբանոցին:	
» Ե. Ծատուրեան	»	2 էլէքտր. պլաֆօն 120 թ.	
արժողութեամբ:			
» Գ. Ռեազով նուիրել է երկաթեղին՝ ընկ. նոր շինու- թեան համար, 152 թ. արժողութեամբ:			
Սուէրներ՝ յօդուտ Հնկերութեանս ձրի եւ էժանազին ճաշարանի.			
Հրաչեայ Սարաֆեանից	.	.	50 թ. —
Խանդամեան ընտանիքից	.	.	20 »
Եղիշէ Աբելանից	.	.	10 »
Խ.	.	.	20 »
Գարեգին Եպիսկ. Սաթունեանցի միջոցով (վրաց էկղարխի թաղման առթիւ)	.	.	50 »
Միհրան Ալէքսանդրովիչ Անանեանից	.	.	100 »
Շաքարի գործ. ներկայացուցիչ Պոլակ	.	.	35 »
Տիկ. Շուշանիկ Բայանդուրեանից	.	.	50 »
Ակնայ պատգամատոր (կաթող. ընտ.) Յա- կոբ Դուրեանից	.	.	20 »
Աղէքսաննը Քարհանեանից	.	.	10 »
Միհրզաջան Խաչատրեանի յիշատակին, նրա որդիներից	.	.	300 »
—————			
Ա. Խ. Ղարաջեանից, 25 աշակ. ճաշավարձ.	Գումար՝	665 թ.	

ԿՈՎԿԱՍԻ ՀԱՅՈՑ ԲԱՐԵԳՈՐԾԱԿԱՆ ՀՆԿԵՐՈՒԹԵԱՆ  
ՃԻՒՂԵՐԻ 1908 թ. ԳՈՐԾՆԷՈՒԹԵԱՆ ՄԱՍԻՆ

Հնկերութեանս ճիւղերից մի մասը կազմւեցին 1908 թ. վեր-  
ջում, այնպէս որ յիշեալ թւին ճիւղերից իւրաքանչիւրը միջին  
թւով միայն 2-3 ամիս է գործնէութիւն ունեցել:

Մինչև գործի կազմակերպելը, պարզ է, ի հարկէ, որ բաւա-  
կան դժուարութիւնների պիտի հանդիպէին ամեն տեղ և սկզբնա-  
կան աշխատանքները չէին կարող ցանկալի արդիւնաւորութիւնը  
ունենալ այդ 2-3 ամիսների ընթացքում: Եւ չնայած այդ հանգա-  
մանքին, այդ չափազանց կարճ ժամանակամիջոցում, շնորհիւ այն  
համակրութեան և կենդանի աջակցութեան, որ ցոյց տուին դէպի-  
համակրութեան լաւագոյն տարրերը համարեա ամեն  
ընկերութիւնս գաւառական լաւագոյն տարրերը համարեա ամեն  
տեղ, ընկերութեանս ճիւղերը հնարաւորութիւն ունեցան ոչ միայն  
ծրագրներ մշակելու և նախահաշիւններ կազմելու իրենց առաջիկայ  
գործնէութեան համար, այլ և հէնց այդ՝ 1908 թ. մի քանի ամիս-  
ների ընթացքում ճիւղերից շատերը ունեցան բաւարար գործնէու-  
թիւն, որը արտայայտում է մեծ մասամբ կրթական-կուլտուրա-  
կան կարիքներին բաւարարութիւն տալու խնդրում,

Ներկայումս հնարաւորութիւն չունենալով 1908 թ. վերջին  
մի քանի ամիսների ընթացքում ընկերութեանս գործող ճիւղերից  
իւրաքանչիւրի գործնէութիւնը մի առ մի յիշատակել, առայժմ  
բաւականանում ենք ընդհանուր գծերով պատկերացնելու այդ ճիւ-  
ղերից մի քանիսի կատարած աչքի ընկնող գործերը, միայն 1908 թ.  
վերջին ամիսներում. աւելի մանրամասն տեղեկութիւններ այդ  
կազմին կը կցենք ընկերութեանս գործնէութեան 1909 թ. տեղե-  
մասին կը կցենք ընկերութեանս գործնէութեան 1909 թ. տեղե-

կազմին \*):

\*) 1908 թ. իրենց գործն. հաշիւը տպագրել և հրատարակել են ընկ. ճիւ-  
ղերից հետեւալները. Եկատերինոգարի, Երևանի:

Ընկերութիւնս, նախ որպէս զարեգործական մի ընկերութիւն, ի հարկէ, անպայման պէտք է արձագանքէր իր դուռը բաղխող բազմաթիւ կարօտեալներին և նրանց դիմումներին կարելոյն չափ բաւարարութիւն տար, եւ ընկերութեանս բոլոր ճիւղերը, ամեն տեղ այդ ուղղութեամբ գործել են, իւրաքանչիւրը իր ոյժերի ներածին չափ օգնելով, ամսավճարներ կամ միանւագ նպաստներ տալով չքաւորներին, ճանապարհածախս՝ կարօտ անցորդներին, աշխատանք՝ աշխատանքից զրկուածներին,

Հնկերութեանս ճիւղերը իրենց գործնէութեան հէնց սկզբում, ինչպէս արդէն յիշատակեցինք, մի առանձին ուշադրութեամբ են վերարերուել դէպի դպրոցական խնդիրը և դրանցից շատերին յաջողուել է նոր դպրոցներ բանալ և կամ եղածները փակման վանդից ազատել:

Շուշու ճիւղի վարչութիւնը յատկապէս չքաւոր աշակերտների համար տեղում դպրոց է բաց արել և Ազգուշաց եկեղեցուն կից» և այդ դպրոցի վրա ծախսում է տարեկան 770 ր.:

Բաթումի ճիւղը տեղում բացել է արհեստագիտական (պրոֆեսիոնալ) դպրոց, որի վրա ծախսում է տարեկան 1500 ր.։

Նպաստ են տուել և համայնքների աջակցութեամբ բաց արել նոր դպրոցներ կամ շատ դպրոցներ ազատել են փակման վաճառքից նաև հետևեալ ձիւղերը. Կարսի Երևանի (6 դպրոց), Լագողակի, Արդահանի, Դիլիջանի (3 դպրոց), Ղաղախի, Դերենդի, Եկատերինօղարի, Բաթումի, Գօրիսի, Փոթիի, Ախալցխայի:

Համալ է կիրակնօրեայ դպրոց՝ հասակաւորների համար՝ նոր-բայազէտի ճիւղը:

Զքաւոր աշտկերտ-աշակերտուհիներին և չքաւոր ուսանողներին դրամով օնութեան են հասել հետեւեալ ճիւղերը. Արդւինի, Երևանի, Ախալքալակի, Դիլիջանի, Կարսի, Հ. Նախիջևանի, Ղաղախի, Դերբենտի, Քութայիսի, Վաղարշապատի, Եկատերինօղարի, Գորիսի, Նոր-Բայազէդի, Շուշու,

Գրադարան-ընթերցարան են բաց արել կամ եղածներին օգնութեան հասել հետևեալ ձիւզերը. Երեանի, Շուշու, Նոր-Բայազէդի, Լազողախի, Քարւանսարայի, Քութայիսի, Կարսի (հիմնել է գրադարան՝ Յ գիւղերում, Դպրոցներին կից), Իգդիրի, Թելաւի,

Ներկայացում—երեկոյթ, զբոսանք են կազմակերպել հետևալ ճիւղերը. Երևանի, Լազողախի, Իգդիրի, Քարշանսարայի,

Ղազախի, Վաղարշապատի, Դիլիջանի, Բաթումի, Արմավիրի, Սըդ-նախի, Շուշի:

Նպաստել են արհեստների, օգտակար գիտելիքների տարածմանը, հիմնելով նաև ջուրհականոցներ, հետևեալ ճիւղերը. Երևանի Քարւահսարային:

Նպաստել է «Ալաստարանի»՝ ընկերութեանս կուբայի ձիւղը:  
Խօլերայի դէմ կուելու միջոցներ է ձեռք առել ընկ. Եկատե-  
րինա և Հեղինե մասսա թիւնո:

Ըինօղաբի ձիւղի վարչութիւնը:  
Տաճկահայ գաղթականներին հայլենիք վերադարձնելու խընդ-  
րում գնահատելի աջակցութիւն են ցոյց տուել ձիւղերից հետե-  
ւեալները. Կարսի (10,000 գաղթական է ճանապարհել), Երևանի,  
Իզդիրի, Բաթումի, Արմաւիրի:

Քաղուածօրէն առաջ ենք բերում խորհրդիս ձեռքի տակ ու բացած՝ ընկ. ճիւղերից մի քանիսի 1908 թ. գործնէութիւնը պատկերազնող տեղեկագրերից նմուշներ.

Շուշու ծիւլ.—Վերաբացուել է 1908 թ. մարտի 6-ին: Ցիշեալ թուին ունեցել է 77 անդամ, 43 վարչական և 6 ընդհանուր ժողով: Անպատճերի բախչան գործում վարչութիւնս խիստ զգոյշ է եղել, ի նկատի ունենալով, որ շատ անդամ բաղդախնդիր մարդիկ ևս կարող էին կորցել բարեգործականի կոպեկներից: Իւրաքանչիւր խնդիր առաջին ժողովում լսելուց յետոյ յանձնուում էր վարչութեանս երեք կամ առնուազն երկու անդամին անձամբ ծանօթանալու խնդրատուի ընտանեկան վիճակի հետ, տեղեկութիւններ բաղելով հարևաններից և այլ հաւասարի աղբիւրներից: Այդ տեղեկութիւնները գեկուցւում էին առաջին ժողովին, որ և անում էր հաղորդականութիւն:

«Վարչութիւնս ի նկատի ունենալով, որ քաղաքում գոյութեան  
ունեցող պետական և ծխական դպրոցները անկարող են ընդունել  
բոլոր ուսումնակարօտ մանուկներին, ուսումնական տարւայ սկզբից  
բաց արեց Ագուլեաց եկեղեցու բակում ծխական միգասեան  
երկսեռ դպրոց բացառապէս քաղաքիս աղքատ դասակարգի զաւակ-  
ների և որբերի համար։ Ծայրահեղ չքաւորներից ընդունուել են  
42 հոգի, որից 19-ը աղջիկ, իսկ 23-ը տղայ։ Սոքա ձրի ուսման  
հետ միասին վարչութիւնից ստացել են դասական պիտոյք և հա-  
զուստ 1908/9 ուսութ. դպրոցի ծախսն է 770 ր.։  
«Ագուլեաց դպրոցը կարգաւորելուց յետոյ, վարչութիւնս հե-

տամուտ եղաւ նախկին փակւած ճիւղի պարձանքը կազմող գրադարանը քաղաքային վարչութիւնից յետ ստանալու, որ և յաջողուեց նոյն թուի նոյեմբերի 1-ին։ Կարճ ժամանակամիջոցում կարգի է բերւում անուշադիր թողնուած գրադարան-ընթերցարանը և յաճախորդները սկսում են կանոնաւոր օգտուել նորանից։ Երկու ամսուայ ընթացքում գրադարան-ընթերցարանը ունեցել է մուտք 15 ր. 60 կ., ելք՝ 230 ր. 79 կ.։

«Վարչութիւնս յունիսի 29-ին կազմակերպեց մի մեծ զբուանք, իսկ դեկտեմբերի 30-ին ակմբանոցի ղահլիճում մի տօնածառ, ուր հասարակութեան հօծ բազմութեան ներկայութիւնը թելադրում է մեզ սրտի բերկըանքով արձանագրել, որ նա ըստ արժանւոյն գնահատում է ընկերութեանս նշանակութիւնը և խորապէս ըմբռնում է նորա անհրաժեշտ կարենութիւնը ներկայ մօմենտում, երբ Շուշին կարիքների ծով է ներկայացնում»:

Առ 1-ն յունուար վարչութիւնը ունեցել է մուտք 4,654 լ. 58 կ., իսկ ծախս՝ առ 1-ն յունուար 891 լ. 80 կոպ.: Տուած է նպաստներ՝ անգործ արհեստաւորների նիւթականը բարելաւելուն, Շուշուայ՝ կարիք ունեցող դպրոցներին և աշակերտաշակերտուհիներին, գործի անընդունակ կարօտեաններին, չքաւոր հիւանդներին, գրադարան-ընթերցարանի, Ագուլեաց եկեղեցու դպրոցի պահպանութեան համար և այլն:

«Գրադարան-նթերցալանը և Ագուլեաց եկեղեցու դպրոցը  
տեղական ճիշդի գործնէութեան վլուխ գործոցն կազմելով, պահան-  
ջում են բաւական խոշոր գումարներ»:

«Գտնելով որ պարբերական՝կամ միանուագ նպաստները ճիշտ  
նպատակին չեն հասնում, շատ անդամ ձրիակերութեան վարժեցը-  
նելով գործի ընդունակ չքաւորներին, վարչութեանս իղձն է մի-  
ջոցներ հայթնայթել, բանալ Շուշիում «Աշխատանքի տուն», որը  
անշուշտ կը նուազեցնէ մուրացիկների թիւը, հսարաւորութիւն  
տալով նըանց՝ ազնիւ վաստակով ձեռք բերելու իրենց օրեկան պա-  
րէնը։ Այս անհրաժեշտ հաստատութեան իրագործումը կախուած է  
վարչութեանս շրջաբերականների և նամակների պատասխաններից  
և Շուշուայ հասարակութեան վերաբերմունքից։  
«Սիրում ենք հաւատաւ»

«Սիրում ենք հաւատալ, որ մեր հայրենակիցները սիրով ար-  
ձագանք կը տան մեր (ընկ. Շուշուայ ճիւղի վարչութեան) կոչին,  
ուղարկելով իւրաքանչիւրը ըստ չափու կարողութեան իւր լու-

ման, որով կը սրբեն անողոք ճակատագրի հարուածով փողոց նետուած որբ և այրիների արտասուքը»:

Երեւանի ճիշդը. «Վարչութիւնն սկսած ապրիլ 20-ից 1908 թ.  
մինչև նոյն տարուայ վերջը ունեցել է 18 նիստ։ Ճիւղը մտնելով  
իր գործնէութեան առաջին տարեշրջանը, սկսել է գործել առանց  
մեծ դրամագլխի և խոշոր նուէրների։ Թէև ընկ. Խորհրդից ստա-  
ցուեց սոյն ճիւղին պատկանեալ դրամագլուխը, բայց այդ դրա-  
մագլուխը Երևանից Թիֆլիս փոխադրելուց յետոյ Թիֆլիսի հայոց  
բարեգործական ընկերութիւնը վերածէլ էր տոկոսաբեր թղթերի,  
որոնք և ուղարկուեցին ճիւղիս։ Երևանի ճիւղի վարչութիւնս բա-  
րուօք համարեց տոկոսաբեր թղթերը չծախսել և վճռեց իր գոր-  
ծնէութեան ընթացքում աշխատել բաւականանալ անդամավճարնե-  
սով։ Նուէրներով և ուրիշ հասոյթներով։

Երևանի ճիշդը 1908 թ. ընթացքում ունեցել է մուտք 5749 լ.

40 *Лиц.*

1)	Անդամավճարներից՝ (167 անդամ)	840	լ.
2)	Խորհրդից ստացուած՝ ռենտաներով	2,700	»
3)	»                  »                  կանխիկ . . .	211	լ. 14 կ.
4)	Նուէրներ զանազան անձերից	523	»
5)	Պարահանդիսից և ներկայացումից	1138	» 9 կ.
6)	Տոկոսադրամ	27	»
7)	Խորհրդից՝ գաղթականներին հայրենիք փոխադրելու ծախս	300	»

ՀԱՂԻԱՄԵՆԸ 5749 թ. 40 կ.

“Հաշւետութեան տարուայ ընթացքում ճիւղիս գործնէութիւնը կայացել է միայն այս կամ այն անհատին և այս կամ այն հասարակական հաստատութեանը նպաստներ բաժանելու մէջ։ Նըստաներ բաժանելիս առաջնակարգ տեղը տրուել է հասարակական պահանջման հիմարկութիւններին, երկրորդը՝ ուսումնառուներին և երրորդը՝ տառապեալներին, որոնցից նպաստներ տրուել են ամենակարօտեալ ներին։ Այս վերջիններին յատկացրուած գումարից 313 լ. 60 կ. վարչութիւնս 1908 թ. հոկտ. 5 ին կայացած ընդհանուր ժողովի որոշման համաձայն, ծախսել է տաճկահայ գաղթական-ներին հայրենիք փոխադրելու համար։ Միևնույն նպատակին գործ 5

է դրուած և մի ներկայացումից ստացուած զուտ արդիւնքը՝ 62 լ.  
բացի այդ, կը կին նոյն նպատակի համար խորհրդից ստացուել է  
300 լ.:

1908 թ.	Երևանի ճիւղի վարչութիւնն ունեցել է ելք.
1) Դպրոցական նպաստ . . . . .	530 լ.
2) Արհեստներ տարածելու . . . . .	100 »
3) Ուսումնառուներին . . . . .	271 »
4) Երևանի գործ. ընկ. ընթերցարանին . . . . .	200 »
5) Կարօտեաներին . . . . .	128 »
6) Գաղթականներին հայրենիք փոխադրելու . . . . .	675 » 60 կ.
7) Դիւանական ծախսեր . . . . .	93 » 49 կ.
8) Մնացորդ առ 1 յունուարի 1909 թ. կանխիկ . . . . .	1051 » 31 կ.
9) Մնացորդ ունտաներով . . . . .	1700 »
10) Աղքատն. Փօնդի . . . . .	1000 »

Գումար՝ 5749 » 40 կ.

Վարչութիւնը հիմում է «ապաստարան», նոյնպէս և գրադարան, որոնք կը զետեղուեն վարչութեանս նոր կառուցուելիք սեպհական շէնքում»:

Եկատերինողարի ճիւղ. ունի 158 անդամ.

#### Մուտք

1) Նախկին Եկատերինոդրի հ. կանաց Բարեգ. Ընկերութիւնից՝ Եկատերինոդրի հ. եկեղ. հոգաբարձութեան միջոցով ստացւած է. . . . .	5382 լ. 35 կ.
2) Անդամակցական վճարներ . . . . .	774 »
3) Նուիրատութիւններ . . . . .	128 »
4) Այլ Եկամուտներ . . . . .	29 » 5 »

6313 լ. 40 կ

#### Ելք

1) Եկատերինոդրի հ. ծխ. դպրոցի ձեռագործի վարժուհուն ոռձիկ . . . . .	120 լ.
2) Ուսանող Խ-ին . . . . .	60 »
3) Եկատ. ձրի թէյատուն պահպանելու նպաստ՝ խօսերայի առթիւ . . . . .	50 »

4) Այլ ծախքել . . . . .	64 լ. 19 կ.
	294 լ. 19 կ.

5) Մնացում է առ. 1-ն յունուար 1909 թ.	6019 լ. 21 կ.
---------------------------------------	---------------

Բաթումի ծիւղ. հիմուտել է Ապր. 3-ին 1908.

#### Մուտք

Անդամակցարներից . . . . .	760 լ.
Նվիրատութիւն . . . . .	293 » 13 կ.
Ներկայացումներեկոյթներից . . . . .	140 » 39 »
Ստացւած նպաստ կենդրօնից, գաղթ. հայրենիք փոխադրելու . . . . .	200 »
Ստացւած գաղթականներից իրենց ճանապարհա- ծախսի մի մասը լրացնելու համար . . . . .	170 »
Հանգանակած՝ գաղթականների ճանապարհածախ- սը հոգալու համար . . . . .	91 լ. 50 »

Ընդամենը 1655 լ. 2 կ.

#### Ելք

Նպաստեր չքաւորներին . . . . .	348 լ. 83 կ.
Գաղթականներին հայրենիք փոխադրելու . . . . .	329 լ. 35 կ.
Ընթացիկ ծախսեր . . . . .	88 լ. 56 »

Ընդամենը 766 լ. 83 կ.

Առ. 1-ն յուն. 1909 մնացում է կանխիկ փող՝ 888 լ. 19 կ.
Վարչութիւնը տեղում հիմնել է արհեստագիտա- կան (պրօֆեսիոնալ) դպր., որի վրա ծախսւում
է տարեկան՝ 1500 լ.

Դիլիջանի ծիւղ. Հիմնուել է 1908 յունիսի 8-ին. ընկ. ունե-  
ցել է 23 անդամ. մուտք ունեցել է 619 լ. 82 կ., որից 112 լ.  
50 կ. անդամակցարներից, իսկ մնացած գումարը՝ 497 լ. 32 կ.  
Ներկայացումներից և վիճակախաղից:  
Ելք եղել է 615 լ. 16 կ., որից Դիլիջանի հ. դպրոցին արուել է  
220 լ., Զարթէջի դպրոցին 140 լ., Պողոսքիլիսայի գպրո-  
ցին 137 լ.: Աղքատ աշակերտների ուսումնավարձ՝ 30 լ., չք-  
անին 137 լ.:

ւորներին՝ 40 ը., Աղբիւր-Տարազի բաժանորդագին (տեղ. դպրոցի համար) 10 ը. 15 կ. և այլ ծախքեր:

Տեղական ճիւղն ունեցել է 10 ժողով, որից 4-ը ընդհանուր, իսկ 6-ը վարչական:

Վարչութիւնը տեղում հիմնում է ջուրհականոց-արհեստանոց:

Արմավիրի ճիւղ.

1908 թ. մուտքը

Անդամակցական վճար	.	.	.	265 ր.
Բազարից և կոնցերտից	.	.	.	1,032 ։ 33 կ.
Նուէր	.	.	.	100 ։

Ընդ. 1397 ր. 33 կ.

Ելքը.

Արմավիրի հ. եկեղ. ծխ. դպրոցին	.	.	1000 ։
Զքաւորներին	.	.	132 ։ 80 կ.
Ճանապարհածախս չքաւորներին՝ հայրենիք վերադասնալու համար	.	.	151 ։ 65 կ.
Մի հիւանդի՝ Խարկով վիրաբուժութեան գնալու համար	.	.	25 ։
Վարչութիւնը տեղում աղքատ աղջիկների համար հիմնում է նաև կար ու ձեփ ուսումնարան, որի պահպանման ծախսն է՝ 1460 ր.			

Իգդիրի ճիւղ. «Հիմնուել է 1908 թ. հոկտ. 21-ին. ընկ. ունի 28 անդամ, տեղում բաց է արել «Աբովեան» գրադարան-ընթերցարան:

Վարչ. դեկտ. 25-ին տուել է նաև մի երեկոյթ, հայրենիք է ուղարկել յիսունից աւելի գաղթականների, նիւթական օժանդակութիւն է ցոյց տուել 2 ընտանիքի և 3 անհատի: «Աղբիւր» մասնկական ամսագրի 25 ամեայ յօրելեանի առթիւ վարչութիւնս հանգանակեց 18 ը. 90 կ. և ունենալով իր ներկայացուցիչը՝ մասնակցեց յօրելեանին: Մուտք եղել է (2 ամսուայ ընթացքում) 125 ը. 13 կ. ծախս՝ 65 ը. 95 կ.

Վարչութիւնը որոշել է բանալ երեկոյեան կուրսեր, անգրագէտների և կիսագրագէտների համար»:

Ախալքալակի ճիւղ. ունեցել է 51 անդամ, 25 հերթական և 3 ընդ. ժողով:

«Վարչութիւնն իր գործնէութեան սկզբից աշխատեց, ընկերութեանս կանոնագրութեան թոյլ տուած ըրջանակում և Ախալքալակի պէս յետ ընկած՝ թէ տնտեսապէս և թէ մտաւորապէս գաւառական քաղաքի թոյլատրելի պայմաններում, աւելացնել տեղական ճիւղի տարեկան մուտքի արբիւրները... շատացնելով անդամների թիւը, կազմակերպելով երեկոյթ—ներկայացումներ և այլն...»

... «Վճարել է 30 աշակերտի տարեկան թոշակը (թէ հ. ծխական դպրոցի և թէ քաղաքային դպր.), տուել է շատ աշակերտների նաև ապրուստի միջոց...»

«Բացի սովորական տառապեալներին օգնութիւն ցոյց տալուց, վարչութիւնս ուշադրութիւն դարձրեց նաև տնայնագործական արհեստաների զարգացման վրա: Վարչութիւնը նուէր ստացաւ նախկին «Ախալքալակի Բարեգործական Ընկերութիւնից» փակւած կ. չ. Բ. Ռ. տեղական ճիւղի արհեստանոցը իր գործուածքներով և 493 ը. 93 կ. յատուկ գումար, և վարչութիւնս գտնելով, որ այդ արհեստանոցը անյաջողութեան է ենթարկել անցեալում և թէ ներկատանում չէ կարող յաջողութիւն ունենալ, որոշեց լիկվիդացիայի ենումս չէ կարող յաջողութիւն ունենալ, որի բաժնետէրերից մինը պիտի լինի և բարեկան ընկերութիւն, որի բաժնետէրերից մինը պիտի լինի և վուշի մշակութիւնը: Կանեփի և վուշի մշակութիւնը, նախօրոք ինքը ցանելով ցուցադշեկել ցողովրդեան: Սորա համար որոշեց հիմնել մի ակցիօներական ցոյց ժողովրդեան: Սորա համար որոշեց հիմնել մի ակցիօներական ընկերութիւն, որի բաժնետէրերից մինը պիտի լինի և բարեկան պործական ընկերութիւնը: Կանեփի և վուշի մշակութիւնը այն պործական ընկերութիւնը ունի գաւառիս միւս ցանքսերի մէջ, որ ոչ ջրել առաւելութիւնը ունի գաւառիս միւս ցանքսերի մէջ, որ ոչ ջրել է պահանջում և ոչ էլ ցրտահար լինում և որը իր հերթին զարկ կը կանեփից գործւածքներ և կանեփից քրքայ ու պարան պատայ քաթանէ գործւածքներ և կանեփից միայն, վարչութիւնս կը ձեռնարկէ բաստելու: Սորանից յետոյ միայն, վարչութիւնս կը ձեռնարկէ արհեստանոց բանալու՝ քաթանէ գործւածքներ և այն պատրաստելու համար»...

... «Դէպի գալուցական խնդիրը լրջօրէն վերաբերեց վարչութիւն նըս և նրա ներկայացուցիչները երեք անգամ առիթ ունեցան շրջելու գաւառիս զանազան շրջանները, ուսումնասիրելով ժողովրդի տնտեղական և կրթական դրութիւնը:»

...Վարչութիւնս խորհրդից ստանալով 1000 լ. նպաստ, բաշխեց այդ գումարը շրջանիս Յ գիւղերի դպրոցներին. Տիլիֆ, Գիւմբուր-գա, Մամղարա»:

Քարլանսարայի ծիւղ (Ղազախի գաւառ). բացւել է 1908 Ապրիլի 20-ին. անդամակցական գումարը ստացւել է 175 ր., նույնիւնակ. խորհրդի Նախագահ պ. Սամսոն Ս. Յարութիւնեանից՝ 25 ր., պ. պ. Բարխուդարեաններից՝ 25 ր., ներկայացումներից՝ 60 ր.: Ի նըսկատի ունենալով, որ աշնանից հացը օրըստօրէ թանգանում է, վաշխառուների՝ ցորեն ամբարելու պատճառով, ի վեաս աղքատ դասակարգի, վարչութիւնս պատշաճաւոր իշխանութեան միջոցով առաջն առաւ և այսօր կարելի է ասել, որ գաւառումս ամենաարժան ցորենն է: Գաւառումս տարածւած հիւանդութիւնների առաջն առնելու համար, վարչութիւնս դեղորայք ձեռք բերեց և բաժանեց մօտ 350 աղքատների ձրիաբար, իսկ ունեորներին՝ կէս գնովի 0գնել է տեղիս դպրոցին, օգնութեան է հասել նաև սովեալներին:

Վարչութիւնս ունի 11 հատ մեղուի փեթակ, որոնք և զարդացնում է:

Վարչութիւնս բաց է արել ջուլհականոց, երկու տորքով։ Բաց  
է արել նաև գլադարան-բնթերգարանն։

Նոր-Բայազէտի միլու հիմնել է 1908 ապրիլին, անդամների թիվը՝ 35. ունեցել է 17 վարչական և 2 ընդհանուր ժողով։ Վարչութիւնը խորհրդի տուած 3400 ր. գումարով բաց է արել իր շրջանում 10 դպրոց հետևեալ գիւղերում։ Օրդակու, Ախտա, Ռընդամալ, Ցամաքաբերդ, Չիբուխլի, Սօլակ, Նորագուղ, Փաշաքենս, Գեօգալդարա, Ալիղում։ Ճիւղիս միջոցներով պահում են 5 որդեգիր աշակերտներ տեղիս ծխական դպրոցում, 2 աշ. պետական տարրական դպրոցում և 1 աշ. Երևանի թեմական դպրոցում։ Վարչութիւնը քաղաքում ունի հասարակական ընթերցարան-գրադարան, ուր ստացւում են 14 հայերէն և ռուսերէն պարբերական հրատա

ըակութիւններ։ Կազմակերպել է եղեկոյեան դասընթացներ՝ հասակաւորների համար»։

Դերքենողի ծիւղը բացուած է 1908 մայիսին. «Նպաստել է տեղ. հայոց ուսումնարանին, նպաստել է տեղ. ուժալական դպրոցի 1 աշակերտի, ուսման վարձ է տուել տեղ. օր. գիմնազիայի 1 աշակերտուհու: Նպաստ է տուել մի աշակերտի, որպէս զի նա կարողանայ իր ուսումը շարունակել: 18 օտարականների տուել է ճանապարհածախս, 6 անգործների համար գտել է աշխատանք: Ճիւղի տնդամների թիւը՝ 53»::

Հազարխի ծիւղը ունի 25 անդամ։ «Դիմումներ է արել զանազան տեղեր և դրսի օգնութեամբ բացել երկու ուսումնարան՝ Թաթլու և Վերին Կարմիր Աղբիւր գիւղերում։ Ղազախ քաղաքում բացել է դպրոց՝ չորս տարուայ դասընթացով (2 ուսուցչով)։ Բարերար անձանց նուիրատութիւնը խնդրելով՝ ձրիապէս Շքաւոր աշակերտ ենք ընդունել մեր դպրոցում։ Զքաւոր աշակերտների համար հոգացել ենք դասական պիտոյքներ։ Առանձին հանդանակութեամբ մեր դպրոցի համար բերել ենք տուել հասկեր և Աղբիւր (վերջինիս համար վճարել ենք չորս տարուայ բաժանորդագինը)։ Ձեռք ենք սիս համար վճարել ենք չորս տարուայ բաժանորդագինը)։ Ձեռք ենք բերել 800 կտոր օգտակար հրատարակութիւններ և ձրիապէս կամ աննշան գներով բաժանել գիւղերում։ Առանձին հանդանակութեամբ օգնութեան ձեռք ենք մեկնել Ուզունթալա գիւղի սովեալներին՝ օգնութեան ձանձնաժողովի օգնութեան հասնելը։ Ամինչև Նպաստամատոյց Յանձնաժողովի օգնութեան հանդիպութեամբ և տարբերաբար օգնութեան ենք ունանակութեամբ և տեղիս չքաւոր ընտանիքներին։ Վարչութիւնը նպաստ հասել տեղիս չքաւոր ընտանիքներին։ Վարչութիւնը նպաստ ստանալով Նպաստամատոյց Յանձնաժողովից, Ուզունթալա գիւղում բացել է ջուիկանոց-արհեստանոց։ Խորհրդից նպաստ ստանալով, բաշխել է հետևեալ դպրոցներին՝ դրանց ազատելով փակնալով, մասն վտանգից։ Ղազախ, Ղալաչա, Բարանա, Ղոշղոթան, Թովուզ, Ներքին-Կարմիր Աղբիւր»։

Դուքայի ծիսդը հիմնուել է 1908 հոկտեմբերին, ունի 72 ան-  
դամ, «վարչութիւնը նպաստել է իրեն դիմող չքաւորներին, նպաս-  
տամ, ապաստարանին, վարչութիւնը ձեռք է բերել ձրիա-  
տել է տեղ՝ ապաստարանին,

պէս մի տուն, որը զիջել է բագւարնակ պ. Ս. Յովհաննիսեանը այդ տանը բնակեցրած են 2 այրիներ՝ իրենց երեխաներով և մի կաթւածահար ծերունի, որոնք բոլորը ստանում են կանոնաւոր դրամական նպաստ։ Վարչութիւնը մի առանձին համախօսականով վերացրել է Հուբացի հայ հասարակութեան մէջ «Քելեխ» կոչւած սովորութիւնը»։

Արդարանի ծիւղ. ունի 33 անդամ. վարչութիւնը տեղ. հ. ծիւղ. գլուխին նպաստել է 90 ըուբլով, սարքել է վիճակախաղ (որի գուտ արդիւնքը՝ 236 ր. 28 կ.):

Հազորախի ճյւղը (24 անդամ) «տեղում բացել է ձրի ժողովը՝ գրական գրադարան-ընթերցարան, որն ունի երեք բաժին՝ հայերէն, ռուսերէն և վրացերէն։ Ստացւում են հետեւալ տարբերական հրատարակութիւնները. Մշակ, Գործ, Խաթաբալա, Յուշարար, Գիւղատնտես, Տիֆլիսկի Լիստօկъ, Նива, Բիրժեվա Ենթակա Վեճութիւնները. Գրադարանը նուէր է ստացել 100 կտոր՝ գիրք: Վարչո օգնել է տեղ. գպրոցին, տալով նպաստ 65 բուլլի: Կազմակերպել է ներկայացւումներ և ցերեկոյթներ: Ղեկավարուելով խորհրդից ստացւած հրահանգներով, վարչութիւնս տեղում հիմնում է մանր վարկի ընկերութիւն (Кредитное товарищество): Մասնակցում են 45 հոգի. հիմնական գրամագլուխը՝ 6,000 ր.: Վարչութիւնս ձեռնարկել է տարածել ծխախոտի մշակութիւնը՝ յօգուտ ճիւղի»:

Գործիսի ծիւղ. «անդամակցական» վճարներ ստացել է 265 լ.: Օգոստուսի 18 աշակերտ-աշակերտուհիներին, վճարելով նրանց թոշակադրամները: Խորհրդից ստանալով 1,000 լ. նպաստ, համայնքների օգնութեամբ բաց է արել գպրոցներ՝ շրջանի հետևեալ գիւղերում. Շիկահող, Հնալիձոր, Խոզնաւար և Ալեւու»:

Սղնախի ճիւղ. անդամավճարներից ստացել է 150 լ., յօգուտ տեղ. աղքատների տուել է մի երեկոյթ:

Ախալցիսայի ճիւղը ունի 90 անդամ. «Խորհրդից ստանալով նը-պաստներ, կարողացել է տեղական համայնքների օգնութեամբ բաց

անել գպրոցներ Տամալա և Սազրէլ գիւղերում։ Վարչութիւնն իր միջոցներից նպաստ (40 ր.) է տուել և Ծաղրութ գիւղի դպրոցին՝ հարկաւոր պիտոյքներ գնելու։ Նպաստել է մօտ 30 ծայր-չքաւորութեան մատնուած տեղական և դրսից տեղս ապաստանած ընտանիքների և անհատների։ Ճիւղի վերաբացման օրից վարչութիւնս աշխատում է յետ ստանալ ընկերութեանս սեփականութիւն՝ գրադարան-ընթերցարանի շինութիւնը Ս. Վարդանանց եկեղեցուց, ուրին նույիրէլ է այդ շէնքը նախկին ընդհ. ժողովը, երբ ընկերութիւնս անցեալում փակուեց կառավարութեան կարգադրութեամբ։

Գանձակի միլ. 65 անդամ. դրամական օժանդակութիւն է ցոյց տուել 100-ից աւելի չքաւոր խնդրատուների, տալով նրանց ապրուստի միջոցներ և կամ ճանապարհածախս՝ կարօտ անցորդներին: Խորհրդից ստանալով 900 ր. նպաստ, բաշխել է և տեղական համայնքների օգնութեամբ բաց արել դպրոցներ հետեւեալ գիւղերում. Ղարաբուլաղ, Գետաշէն, Բըաջուր, Կորիւնապատ:

Վաղարշապատի ծիւղը. (42 անդամ) օգնել է 21 չքաւոր ընտանիքների 95 բուբլով։ Կարօտ աշակերտներին տուել է հագուստեղին և ոտնաման 165 ը., խորհրդից ստացած նպաստով երկու նոր դպրոցներ է բաց արել Արարանի երկու գիւղերում։ Յլիքիւչանում կում և Ղազանֆարում։ Զեռնարկել է տեղում ժողովրդական մի տուն կառուցելու, որը կազմելու է ընկ. սեպհականութիւն և ուր կառուցելու, որը կազմելու է ընկ. սեպհականութիւններ ու տրւելու կարգացւելու են հանրամատչելի դասախոսութիւններ ու տրւելու ներկայացուցներ։

Քովմայիսի օհուշ, ունի 44 անդամ. «Ճիւղը բացւեց և իր գործընէութիւնը սկսեց ապրիլ ամսից և 9 ամսւայ ժամանակամիջոցում կարողացաւ բանալ ձրի ընթերցարան (հայոց եկ. ծխ. դպրոցի շենքում), ուր ստացւում են հայ, ոռուս և վրաց լեզուներով պարբերական

թերթեր և ամսագրեր: Այնուհետև բացեց գրադարան, որի համար առայժմ կարողացել է ձեռք բերել գրամով և զանազան անձանց օժանդակութեամբ մօտ 2000 հայերէն գիրք: Գրադարանը ընթերցարանի համար գնւած է կանոնաւոր կահ-կարասիք՝ վարչութեանս միջոցներով: Վարչութիւնս մշակել է նաև կիրակնօրեայ դպրոցի ծրագիր, որի համար գիրմել է ձեռնհաս անձանց աջակցութեան, մօտնկ ապագայում վարչութիւնս բանալու է նոյն դպրոցը արհեստագիտական (կար ու ձեռի և կօշկակարութեան) բաժնով: Վարչութիւնը նիւթական նպաստ է տուել Քութայիսի հայոց եկեղ.-ծխական միդասեան երկսեռ դպրոցին 150 ըուբլի, իսկ պետական միւս դպրոցներում ուսանող չքաւոր հայ պատանիներին և աղքատներին նպաստել է 50 ըուբլ.: Քութայիսի նահանգում գլուխող հայ գիւղերի ժողովրդի դրութեան և տեղական պայմանների հետ ծանօթանալով, (այս շրջանը բոլորովին զուրկ է հայ դպրոցներից և նիւթական միջոցներից), բաց արեց Զիսար և Սաշինէր գիւղերում 1908-9 ուս. թ. դպրոցներ, որոնց պահպանութեան համար միջնորդեց կ. չ. Բ. Ը. խորհրդի առաջ և ստացաւ իւրաքանչիւր գիւղի դպրոցի համար տարեկան 250-ական ր. նպաստ: 1908 թ. ընթացքում վարչութիւնս ունեցել է մուտք՝ անդամավճարներից 219 ր. նուէրներ՝ 145 ր., ներկայացում երեկոյթից և այլ աղքիւրներից, ընդամենը 364 ր., իսկ ծախս՝ ընդամենը 309 ր. 35 կոպ.»:

Կարսի ճիւղ. ունի 80 անդամ. «Վարչութիւնը կարձ ժամանակամիջոցում ունեցել է համեմատաբար հարուստ գործնէութիւն: Ընդհանուր մուտք՝ միայն տեղական միջոցներից, ունեցել է 1700 ը.: Գաղթականներին հայրենիք վերադարձնելու խնդրում մեծ ծառայութիւն է մատուցել առ. 1-ն յունուար 1909 թ. հայրենիք է ուղարկել մօտ 10,000 մարդ և այդ առթիւծախսել է 1,062 բուբլի (որից 800 ը. ստացել է Խորհրդից): Կազմակերպել է հանրամատչելի դասախոսութիւններ: Հագուստներ է գնել տեղական չքաւոր աշակերտների համար՝ 214 բուբլու: Աղքատ աշակերտների թոշակներ է վճարել 61 ը.: Տեղ. ծխական դպրոցի Փիզիքական կաբինետը ճոխացնելու համար ծախսել է 200 ը.: Խորհրդի նպաստով և համայնքների աջակցութեամբ բաց է արել նոր դպրոցներ Շիրակի Մաւրակ, Զարդանէ, Փիրւալի և Բաշկադիլլար գիւղերում: Այդ 4 դպրոցնե-

ըին կից հիմել է 4 փոքրիկ գրադարաններ, ծախսելով 200 ըուբի: Օրթաքաղիկլար գիւղի ծխական դպրոցին իր միջոցներից նպաստել է 100 ըուբլ: Անցեալ ամառ Ալէքսանդրապոլում հեղեղեց վասուածներին օգնել է—314 ը. օգնել է չքաւոր շատ ընտանիքների և այլ ընթացիկ ծախքեր է ունեցել: Առ 1-ն յունիար 1909 թ. վարչութեան ունեցել է մուտքի չափ ելք՝ 1700 ը., միայն տեղական միջոցներից:

Այսպիսի բազմազան և արդիւնաւոր աշխատանք ցոյց են տուել  
ընկերութեանս շատ ճիւղեր իրենց կազմակերպման հէնց առաջին  
ամիսների ընթացքում՝ 1908 թ.: Այսուհետեւ, սկսած 1909 թուի  
յունուարից, աւելի է ընդարձակում դրանց գործնէութեան ասպա-  
րէցը, ամեն տեղ աւելի համախմբուած ջանքեր են գործ դրւում  
շրջանի կարիքները ուսումնասիրելու խնդրում և դէպի գգացուող  
կարիքները, մասնաւորապէս կրթական-կուլտուրական բնոյթ ունե-  
ցեղ կարիքները մի առանձին ուշադրութեամբ և եռանդով վերա-  
բերում ու բաւարար գործ կատարում այդ ասպարէցում: Ճիւղերը  
հետզետէ իրենց շուրջն են կարողանում խտացնել տեղական բա-  
